

11035

ЗКІ-0П
7-62



ՊԻՈՆԵՐՆԵՐԻ
ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ
ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԿ/ՕՌ 1940 թվին
Պ-62 320/128

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ



Աղբյուջեմ կենծկում
Պանկական և Պատանեկական Գրականության
Հրատարակչություն

ԲԱԳՈՒ - 1940

Арм.
Н-564а

24 SEP 2006
1 DEC 2009

ԳԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ-
ՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՊԱՇՏՎԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ

1940 թ. Վ. Խ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԵՐԱԴՐԵՐԸ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛАР

Ապրիլ 1940 ԿԵՆՏՐՈՆ

Մանկական և Պատանեկական Գրականության
Հրատարակություն
Բարձր—1940

Инв. № 14214



22 JUL 2013

11035

ՊԻՌՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ՊՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ
1940 թ. ՀԱՄԱՄԻՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱ-
ՆԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Համամիութենական պաշտպանական մըր-
ցություններն անց են կացնում Համկանական կենտրոնական մըրցությունը, ԽՍՀՄ ՊԱԶԼ. Ավիաքիմի կենտրոնական միությունը, Համապատասխանական միությունը, Կարմիր կիսալուսնի բնկերությունների միության Գործկոմը՝ նպատակ ունենալով՝

ա) դպրոցներում լայն ծագալել մասսայական պաշտպանական աշխատանքը, կազմակերպել պաշտպանական խմբակներ, թիմեր, ուսումնասիրել քաղաքացիական պատերազմի պատմությունը, Բանվորա Գյուղացիական կարմիր Բանակի առաջնորդների ու կազմակերպիչների—ընկերներ և ենթի, Ստալինի, Վորոշիլովի, Ֆրունզեյի—կենսագրությունները, զրույցներ անցկացնել կարմիր Բանա-

159-87

կի ու Ռազմա-Ծովային Նախատորմի կյան-
քի և ուսուցման մասին.

բ) ավելի շատ պիտոներներ ու դպրոցա-
կաններ ընդգրկել „Վորոշիլովյան հրաձիգ“,
„Պատանի վորոշիլովյան հրաձիգ“, „Պատ-
րաստ հակառակյան քիմիական պաշտպա-
նության“, „Յեղիր պատրաստ սանիտարա-
կան պաշտպանության“, „Պատրաստ սանի-
տարական պաշտպանության“ կրծքանշան-
ների համար նախապատրաստումով և
նորմաների հանձնումով.

գ) ավելի մեծ թվով պիտոներներ ու դպրո-
ցականներ ընդգրկել մրցություններին:

ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Պաշտպանական մրցություններին կարող
ե մասնակցել 5-րդից մինչև 10-րդ դասա-
րանի յուրաքանչյուր սովորող:

Մրցություններն անց են կացվում յեր.
կու խմբով.

1-ին խումբ — 5, 6, 7 րդ դասարանների
սովորողները.

2-րդ խումբ — 8, 9, 10-րդ դասարանների
սովորողները:

Առաջին խմբի համար մրցություններն
անց են կացվում պաշտպանական աշխատան-
քի հինգ տեսակների — հրաձգության,
չՈՔՊ, կապի, ուղղմական տոպոգրաֆիայի
և ՊԱՊ գծով:

Երեկորդ խմբի համար՝ վեց տեսակների
— հրաձգության, նոնաձգության, չՈՔՊ,
կապի, ուղղմական տոպոգրաֆիայի և ՊԱՊ
գծով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—1. Նոնաձգության
վարժությունը մտնում է հրաձգության ծրա-
գրի մեջ:

2. Կապի և ուղղմական տոպոգրաֆիայի վար-
ժությունը կատարում է մի թիմը (4 հոգի):

Դպրոցների ներսում տարվող մրցություն-
ներում լավագույն ցուցանիշներ ցույց տված
պիտոներներն ու դպրոցականները մացվում
են դպրոցների համահավաք թիմերի մեջ,
բաղկացած 5 հրաձգից (այդ թվում 3 նոնա-
ձիգ և խմբի համար), 4 հոգի չՈՔՊ-ի գծով,
4 հոգի կապի ու տոպոգրաֆիայի և 4 հոգի
ՊԱՊ նորմատիվների գծով:

Այդպիսի կազմով (34 հոգի — 17-ը 1-ին
խմբից և 17-ը 2-րդ խմբից) դպրոցական թի-

մերը մասնակցում են շրջանային մրցություններին։ Այն դպրոցը, վորը մրցությունների տեսակներից վորեն մեկի գծով իր թիմը չի ներկայացրել, չի թույլատրվում մասնակցելու շրջանային մրցություններին։

Շրջանային մրցություններում ջոկվում են հրաձգության, ՀԱԲՊ, ՊՍՊ, ուղմական տոպոգրաֆիայի ու կապի գծով առաջին տեղերը գրաված մրցությունների մասնակիցները և մացվում են շրջանների համահավաք թիմերի մեջ՝ մարզային, յերկրամասային և ավտոնոմ հանրապետական մրցություններին մասնակցելու համար։

Հանրապետական մրցություններին մասնակցում են մարզային, յերկրամասային և ավտոնոմ հանրապետական մրցությունների լավագույն մասնակիցներից կազմված համահավաք թիմերը։

Համամիութենական պաշտպանական մրցություններին յուրաքանչյուր միութենական հանրապետություններ մասնակցում են 1-ին և 2-րդ խմբերի համահավաք թիմերը և յերկաթուղային տրանսպորտի դպրոցների թիմը՝ հետեւյալ կազմով։ հրաձիգների

2 թիմ՝ յուրաքանչյուր խմբում 5 հոգի, չՈԲՊ-ի 2 թիմ՝ յուրաքանչյուր 4 հոգուց, կապի ու տոպոգրաֆիայի 2 թիմ՝ յուրաքանչյուր 4 հոգուց և ՊԱՊ-ի 2 թիմ՝ յուրաքանչյուր 4 հոգուց կազմված։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Մրցության յուրաքանչյուր տեսակի գծով պետք ելինի մեկ պահեստային։ Համամիութենական մրցություններում յուրաքանչյուր հանրապետությունների պետք ելինեն 46 հոգի, այդ թվում թիմի պետը, քաղղեկը և 2 տրենյոր։

Համամիութենական պաշտպանական մրցություններին յուրաքանչյուր թիմ գալիս ել թիմի պետի ու քաղղեկի գլխավորությամբ։ Թիմի պետին և քաղղեկին հաստատում են միութենական հանրապետության ԼԿՑԵՄ կենտրոնը և ՊԱԶՀ-Ավիաքիմի Խորհրդի նախագահությունը։

Դպրոցական, շրջանային, մարզային ու հանրապետական մրցությունների մասին լրիվ հաշվետվությունը (բացի ՌԽՖՍՀ-ից) ուղարկում ե Համամիութենական կազմկո-

միտելին՝ հանրապետական մրցությունները
վերջանալուց հինգ որ հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ՌԽՖՍՀ-ից դպրոցական,
շրջանային, մարզային, յերկրամասային և ավ-
տոնում - հանրապետական մրցությունների
մասին հաշվետվությունները Համամութենա-
կան կազմկոմիտեյին են սւղարկվում մար-
զային, յերկրամասային, ավտոնում հանրապե-
տություններում ավտոնում - հանրապետա-
կան մրցությունները վերջանալուց հինգ որ
հետո:

ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒ- ԹՅՈՒՆԸ

1939 թ. գեկտեմբերի 1 ից պիոներա-
կան ջոկատներում ու դասարաններում ծա-
վալվում ե նախապատրաստական աշխա-
տանք դպրոցական մրցությունների համար.
Կազմակերպվում են պաշտպանական խրմ-
բակներ, վորոնցում տարվում ե պաշտպանա-
կան կրծքանշանների նորմաների հանձնման
նախապատրաստություն, կազմվում են թի-
մեր և անց են կացվում նրանց վարժու-
թյուններ: Հանրապումարը կլինին դպրոց-
ների ներսում մրցություններն առանձին
տեսակների գծով (հրաձային, նոռնաձու-

թյուն, չՈԲՊ, ՊԱՊ, կապի և ռազմական
տոպոգրաֆիայի):

Դպրոցներում պիոներների հետ պարապ-
մունքներ տանելու համար ներգրավվում են
հրամանատարներն ու կարմիր-բանակային-
ները, մանկավարժները, ծնողները, շեֆու-
թյուն անող ձեռնարկության կոմյերիտա-
կանները: Մրցություններին նախապատ-
րաստվելու և առանձնապես հրաձգության
գործի բոլոր պարապմունքները պետք ե
տարիվեն միմիայն հասակավորների ղեկա-
վարությամբ, վորոնք հատուկ պատրաստու-
թյուն ունեն:

ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄ- ԿԵՏՆԵՐԸ

1. Դպրոցական մրցությունները — 1940
թ. փետրվարի 10-ից մինչև 23-ը.

2. Շրջանային մրցությունները — 1940 թ.
մարտի 15-ից մինչեւ 25-ը.

3. Մարզային, յերկրամասային, ավտոնում
- հանրապետական մրցությունները — 1940
թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի 1-ը.

4. Հանրապետական մրցությունները —
1940 թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը.

5. Համամիութենական մրցությունները
— 1940 թ. սպոստոսի 1-ից մինչև 13-ը:

Մարզային, յերկրամասային մրցություններն անց են կացվում հեռակայորեն:

Շրջանային կենտրոնից հեռու գտնվող առանձին դպրոցներին թույլատրվում ե շրջանային մրցություններին մասնակցել հեռակայորեն:

Այն միութենական հանրապետություններ, վարոնք հնարավորություն չունեն բոլոր մասնակիցներին տեղը կանչելով անցկացնել մրցությունները, այդպիսիք անց են կացնում հեռակայորեն։ ՈԽՖՍՀ-ի մրցություններն անց են կացվում հեռակայորեն։

ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մրցություններն անցկացնելու և դպրոցական, շրջանային, մարզային ու հանրապետական մրցություններում առաջնությունը փորոշելու համար, կոմյերիտական ու պրոֆմիութենական կազմակերպությունների, ՊԱԶՀ-Ավիաքիմի, Կարմիր խաչի, Կարմիր կիսալուսնի, Ժողկրթբաժնի և տեղական մամուլի ներկայացուցիչներից կազմ-

վում են կազմկոմիտեներ։ Կազմկոմիտեներին կից կազմվում են դատավորական կութեգիաներ։ Մրցությունների յուրաքանչյուր տեսակի գծով կազմկոմիտեն հաստատում ե պլիավոր դատավորներ։

ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՅԵԼ ՄՐՑԱՆԿՆԵՐԸ

Համամիութենական առաջնությունը վորոշվում է ինչպես բոլոր տեսակների կոմպլեքսով, այնպես ել մրցությունների առանձին տեսակներով։

Ընդհանուր առաջնությունը վորոշվում է ոլիմպիական սիստեմով, այսինքն 1-ին և 2-րդ խմբերի առանձին մրցություններում գրաված տեղերի գումարի համաձայն։ Մրցությունների առանձին տեսակների գծով առաջնությունը վորոշվում է նույնական վարդություններում գրաված տեղերի գումարի համաձայն։

Միությունում ընդհանուր կոմպլեքսում առաջին տեղը գրաված թիմը պարգևատրվում է Պաշտպանության ֆողկոմատի փխանցիկ մրցանակով — զբոշով և 5.000 ռուբլու թանկարժեք նվերներով։

Յերկրորդ տեղը գրաված թիմը պարզեաւորվում է Համլկօնս կենտրոնի փոխանցիկ մրցանակով — գրոշով և 3,000 ռուբլու թանկարժեք նվերներով։

Յերրորդ տեղը գրաված թիմը պարզեաւորվում է ՊԱ.ՁԼ.Ավիաքիմի կենտրոնի կարմիր խաչի ու կարմիր կիսալուսնի ֆորձկոմի փոխանցիկ մրցանակով — սեղանի ժամացույցով և 3000 ռուբլու թանկարժեք նվերներով։

Չորրորդ տեղը գրաված թիմը պարզեաւորվում է Համպրոֆիկենտխորհրդի մրցանակով — գավաթով և 2500 ռուբլու թանկարժեք նվերներով։

Մրցությունների առանձին տեսակների գծով առաջին յերեք տեղերը գրաված թիմերը պարզեաւորվում են Պաշտպանության ժողովադատի, Համլկօնս կենտրոնի, Համպրոֆիկենտխորհրդի, ԽՍՀՄ ՊԱ.ՁԼ.-Ավիաքիմի կենտրոնի կարմիր խաչի ու կարմիր կիսալուսնի ֆորձկոմի մրցանակներով։

Բոլոր վարժություններից լավագույն անհատական ցուցանիշների համար սահմանվում են անհատական մրցանակներ։

ՊԻՌՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
1940 թ. ՀԱՄԱՄԻՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏ-
ՊԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱ-
ԳԻՐԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱԶԴԱՅԻՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ 1-ին ՅԵՎ 2-րդ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Հրացանը — փոքր կալիբրի ՏՈՉ-8 կամ
ՏՈՉ-9։

Նշանոցը — բաց։

Նշանը — թիրախ № 6։

Նեռակորությունը — 25 մետր։

Փամփուշտներ — 3 փորձնական և 5 հաշվանցման։

Հրածգության դիրքը — պառկած, (հրացանափոկից ոգտվելը թույլատրվում է)։

Հրածգության ժամանակը — անսահմանափակ։

Գնահատականը փորոշվում է աչքերի գումարով։

Կատարված կարգը. — գատավորը հրածգին ցույց է տալիս նշանը և հրածգության տեղը. գատավորի հրամանով հրածիքը պատրաստվում է հրածգության, լցնում և հրացանը և կրակ բացում։

ՀՐԱՋԱՆԱՅԻՆ ՀՐԱՋԳԱՅԻՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՋԱՆԱՅՐ—ՓՈՔԲ ԿԱԼԻԲՐԻ ՏՈԶ—8 ԿԱՄ
ՏՈԶ—9:

ՆՉԱՆՈՂՐ—ՔԱՋ:

ՆՉԱՆՐ—ԹԻՐԱԽ և 7:

ՆԵՌԱՎՈՐՈւթյունը—50 մետր:

Փամփուշտներ—3 փորձնական և 5
հաշվանցման:

ՀՐԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԻՐՔԸ—պառկած:
(հրացանափոկից ողտվելը թույլատրվում ե):

ՀՐԱՋԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ—ան-
սահմանափակ:

ԳԻՆԱԿԱՆԱՅՐ—ՎՈՐՈՇՎՈՎՈՒՄ և աչ-
քերի գումարով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.—ՊԱՏԱՎՈՐԸ հրա-
ձգին ցույց ե տալիս նշանը և հրաձգու-
թյան տեղը. ՊԱՏԱՎՈՐԻ հրամանով հրաձիգը
պատրաստվում ե հրաձգության, լցնում ե
հրացանը և կրակ բացում:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՋԱՆԱՅՐ—ՏՈԶ-8 ԿԱՄ ՏՈԶ-9:

ՆՉԱՆՈՂՐ—ՔԱՋ:

ՆՉԱՆՐ—ԹԻՐԱԽ 9-ա, ՎՈՔՐԱՖՐԱԾ 5
անգամ:

ՆԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՐ—50 մետր:

ՓԱՄՓՈՎՇՏՆԵՐ—3 ՓՈՐՁՆԱԿԱՆ և 5 հաշ-
վանցման:

ՀՐԱՋԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԻՐՔԸ—պառկած (հրա-
ցանափոկից ողտվելը թույլատրվում ե):

ՀՐԱՋԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ—ՓՈՐՁ-
ՆԱԿԱՆԻ համար — անսահմանափակ, հաշ-
վանցման համար—5 բողեք.

ԳԻՆԱԿԱՆԱՅՐ—ՎՈՐՈՇՎՈՎՈՒՄ և աչքերի
գումարով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.—ՊԱՏԱՎՈՐԸ հրա-
ձգին ցույց ե տալիս նշանը և հրաձգու-
թյան տեղը. ՊԱՏԱՎՈՐԻ հրամանով հրա-
ձիգը պատրաստվում ե հրաձգության, լց-
նում ե հրացանը և կրակ բացում:

1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԽՄԲԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ, ՅԵՐԿՐԱ-
ՄԱՍԱՅԻՆ ՅԵՎ ԱՎՏՈՆՈՄ — ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՋԳԱՅԻՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՋԱՆԱՅՐ—ՏՈԶ-8 ԿԱՄ ՏՈԶ-9:

ՆՉԱՆՈՂՐ—ՔԱՋ:

Նշանը — թիրախ № 7:

Հեռավորությունը — 50 մետր:

Փամփուշտներ — 3 փորձնական և 10
հաշվանցման, (յերկու սերիա) յուրաքանչ-
չյուր թիրախին 5 — ական փամփուշտ:

Հրածգության դիրքը — պառկած,
(հրացանափոկից ողտվելը թույլատրվում է):
Հրածգության ժամանակը — ան-
սահմանափակ:

Գնահատականը վորոշվում ե աչքերի
գումարով:

Կատարված կարգը. — դատավորը հրածգին
ցույց ե տալիս նշանը և կրակելու տե-
ղը. դատավորի հրամանով հրածիգը պատ-
րաստվում ե հրածգության և կրակ բացում:

Հաշվանցման հրածգությունը 2 սերիա-
յով հրածիգը կատարում ե տեղից չհեռա-
նալով:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հրածգություն հակազազով

Հրացանը — ՏՈԶ-8 կամ ՏՈԶ-9:
Նշանոցը — բաց:

Նշանը — թիրախ № 9, փոքրացրած 5
անգամ:

Հեռավորությունը — 50 մետր:

Փամփուշտներ — 3 փորձնական և 5
հաշվանցման:

Հրածգության դիրքը — պառկած,
(հրացանափոկից ողտվելը թույլատրվում է):

Հրածգության ժամանակը — 5 րոպե, հաշվանցման հա-
մար — 5 րոպե:

Գնահատականը վորոշվում ե աչքերի
գումարով:

Կատարված կարգը. — դատավորի հրամա-
նով՝ „զագեր“, հրածիգը հագնում ե հակա-
զազը և պատրաստվում հրածգության. „զա-
գեր“ հրամանից 15 վայրկյան հետո հրա-
ման ե տրվում՝ «կրակ»:

Հրածգության ժամանակը հաշվվում ե
„կրակ“ հրամանը տրվելու մոմենտից: Հա-
կազազը պետք է լինի սահմանված տեսա-
կի, առանց փորեւե փոփոխման և լրացման:
Հրածգությունից առաջ հակազազի ապա-
կիները մաքրելն ու ոճելը թույլատրվում ե:

Հանրապետական մրցություններն անց
են կացվում Համամիութենական մրցու-
թյունների պարտադիր մասի ծրագրերում:

ՀԱՍՏԱՄԻԹԵՆԱԿԱՆ ԳՐԱԳԱՅԻՆ ՄԲՅՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱԳՐԵՐԸ

1 - ԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

| ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հրաձգություն հակագազով (թիմային—
անհատական)

Զենքը—փոքր կալիբրի ՏՈԶ-8 կամ ՏՈԶ-9
հրացան:

Նշանոցը—բաց:
Նշանը—թիրախ № 9-ա, փոքրացրած 5
անգամ:

Հեռավորությունը—50 մետր:
Փամփուշտներ—3 փորձնական և 5
հաշվանցման:

Հրացանափոկից ոգտվելը թույլատրվում է:
(հրացանափոկից ոգտվելը թույլատրվում է):

Հրացանության ժամանակը—5 րոպե
փորձնականի և 5 րոպե հաշվանցման հա-
մար:

Գնահատականը վորոշվում է աչքերի
գումարով:

Կատարման կարգը.—դատավորի հրամա-
նով՝ „գաղեր“, հրածիդը հագնում և հակա-
դազը և պատրաստվում ե հրածության:
„Գաղեր“ հրամանից 15 վայրկյան հետո հրա-
ման և տրվում՝ „կրակ“: Հրածության ժա-
մանակը հաշվում է „կրակ“ հրամանը տրր-
վելու մոմենտից: Հակադազը պետք է լի-
նի սահմանված տեսակի, առանց վորեւե փո-
փոխման ու լրացման: Հրածությունից ա-
ռաջ հակագազի ապակիները մաքրելն ու
ոծելը թույլատրվում է:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հրաձգություն խորությամբ (թիմային—
անհատական)

Զենքը—փ/կալիբրի ՏՈԶ-8 կամ ՏՈԶ-9
հրացան:

Նշանոցը—բաց:
Նշանը—№ 20—շրջադիտակը 75 մետր
հեռավորության վրա:

№ 11-ա գլխավոր—125 մետրի վրա:
№ 9 հատած—150 մետրի վրա:
№ 9-ա հատած—200 մետրի վրա:

Փամփուշտներ - 8:

Հրածգության դիրքը — պառկած
(հրացանափոկից ողափելը թույլատրվում ե):
Հրածգության ժամանակը — 10
բողեւ:

Գնահատականը վորոշվում ե խփված
թիրախների քանակով:

Կատարման կարգը. — դատավորը հրածգին ցույց ե տալիս նշանները, հրածգության տեղը և սեկտորը: Հրածգի պատրաստվելուց հետո հրաման ե արվում „կրակ“: 10 րոպեյից հետո դատավորի հրամանով հրածգությունը դադարեցվում ե: „Ավարտ“ հրամանից հետո կատարված կրակոցը համարվում ե դիպված և հանվում ե հրածգի ունեցած արդյունքներից:

III Վ.Ս.Բ.Ժ.ՈՒԹՅՈՒՆ

Մենամարտային հրաձգություն (թիմային
վարժություն)

Զենքը — Փ/կալիբրի ՏՈԶ.8 կամ ՏՈԶ.9
հրացան:

Նշանոցը — բաց:

Նշանը — № 11-ա, գլխավոր:

Հեռավորությունը — 100 մետր:
Փամփուշտները — անսահմանափակ
քանակությամբ:

Հրածգության դիրքը — պառկած
(հրացանափոկից ողափելը թույլատրվում ե):
Հրածգության ժամանակը — անսահմանափակ:

Գնահատականը վորոշվում ե թիմի
հաղթանակների թվով:

Կատարման կարգը. — յերկու թիմեր 5-ական հրածգությունը տեղափորվում են ստարտի գծի վրա, կրակի գծից 15 մետր հեռավորության վրա: Հրածգիգները պառկում են փորի վրա, հենցելով արմունկների ու յերկու ձեռքի նախարազությունների վրա, ազատ տարածելով վոտքերը. հրացանը լցրած չե. հրացանի ու փամփուշտաների տեղափորումը — հրածգի հայեցողությամբ:

Վարժության կատարման սկիզբը վորոշվում է դատավորի ազդանշանով կամ „մարշ“ հրամանով, վորը արվում ե «պատրաստվել» հրամանից 5—10 վայրկյան հետո:

Դուրս վագելով կրակի գիծը, հրածգիգնումը և հրացանափոկը: (Հրացանի լցումը

կատարվում ե միայն կրակի գծի վրա, առանց լրացուցիչ հրամանի): Հրաձգությունը տարվում ե ինքնուրուցյն, իր թիմի դիմաց տեղափորված թիրախների վրա, մինչև վերջին թիրախի խփելը:

Իր թիմի վերջին հինգերորդ թիրախի խփելու և ընկնելու մոմենտը կտրվում ե և համարվում ե վարժության կատարման վերջը:

Իր բոլոր թիրախներն ամենակարճ ժամանակում խփած թիմը համարվում է հանդիպալմը տարած, իսկ ամենամեծ ժամկետում՝ տարված:

2.ՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հրաձգություն հակազազով (քիմային—անհատական)

ԶԵԿՔԸ Փ/ԿԱԼԻԲՐԻ ՏՈՉ-8 կամ ՏՈՉ-9
հրացան:

Նշանոցը—բաց:

Նշանը—№ 11-ա (տեղի ֆոնի վրա, հայտնվում ե 10 մետրի սեկոորում՝ 5 րոպեյով):

Փամփուշտներ — 3 փորձնական և 5 հաշվանցման:

Հրաձգության դիրքը — պառկած (հրացանափոկից ոգտվելը թույլատրվում ե):

Հրաձգության ժամանակակից համար՝ 5 րոպե, հաշվանցման համար — 5 րոպե:

Գնահատականը վորոշվում ե աչքերի գումարով:

Կատարված կարգը. նույնը, ինչ վոր կրասեր խմբի 1-ին վարժությունում:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հրաձգություն մինչեվ առաջին վրիպումը (քիմային-անհատական)

ԶԵԿՔԸ—Փ/ԿԱԼԻԲՐԻ ՏՈՉ-8 կամ ՏՈՉ-9
հրացան:

Նշանոցը—բաց:

Նշանը—№ 11-ա (տեղի ֆոնի վրա, հայտնվում ե 10 մետրի սեկոորում՝ 5 րոպեյով):

Դիրքը—պառկած (հրացանափոկից ոգտվելը թույլատրվում ե):

Հեռավորությունը — 100 մետր:

Փամփուշտներ — անսահմանափակ
քանակությամբ:

Գնահատականը վորոշվում է խփված
թիրախների քանակով:

Կատարված կարգը.—դատավորը հրաձգին
ցույց է տալիս հրաձգության տեղը, վորո-
տեղ և ինչքան ժամանակով է հայտնվելու
նշանը: Հրաձիգը պատրաստվում է հրաձգու-
թյան մինչև նշանի հայտնվելը, նշանը հայտ-
նվելուց ինքնուրույն կրակ է բաց անում: Թիրախը հայտնվում է 6 վայրկյանով՝ մի
անգամ յերեալուց մինչև մյուսը 15 վայրկյան
ընդմիջումով: Խփելուց թիրախն իսկույն
և յեթ թագնվում է: Զիփված թիրախը 6
վայրկյանից հետո թագնվում է և այլս չի
հայտնվում: Զկրակվելու դեպքում հրաձ-
գին իրավունք է տրվում շարունակելու
հրաձգությունը:

III ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Մենամարտային նրանգություն (թիվային
վարժություն)

Զենքը—փ/կալիբրի ՏՌԶ—8 կամ ՏՌԶ-9
հրացան:
Նշանանոցը—բայց:

Նշանը—№ 11-ա, գլխավոր:
Հեռավորությունը—100 մետր:
Փամփուշտներ — անսահմանափակ
քանակությամբ:

Հրաձգության դիրքը—պառկած (հը-
րացանափոկից ոգավել թույլատրվում է):

Հրաձգության ժամանակը — ան-
սահմանափակ:

Գնահատականը վորոշվում է թիմի
հաղթանակների քանակով:

Կատարված կարգը.—յերկու թիմ՝ 5-ական
հրաձգով տեղափորվում են ստարտի գծի
վրա՝ կրակի գծից 25 մետր հեռավորու-
թյամբ: Հրաձիգները պառկում են փորի
վրա, հենվելով արմունկների ու յերկու
ձեռքերի նախաբազուկների վրա, ազատ
տարածելով վոտքերը. հրացանը լցրած չե.
հրացանի ու փամփուշտների տեղափոխումը
—հրաձգի հայեցողությամբ:

Վարժության կատարման սկիզբը վորոշ-
վում է դատավորի ազդանշանով կամ «մարշ»
հրամանով, վորը տրվում է «պատրաստվել»
հրամանից 5-10 վայրկյան հետո:

Դուրս վագելով կրակի գիծը, հրաձիգը

հագնում ե հրացանափոկը: (Հրացանի լր. ցումը կատարվում ե միայն կրակի գծի վրա, առանց լրացուցիչ հրամանի): Հրաձգությունը տարվում ե ինքնուրույն՝ իր թիմի դիմաց տեղավորված թիրախների վրա՝ մինչև վերջին թիրախի խփվելը: Իր թիմի վերջին, հինգերորդ թիրախի խփվելու և ընկնելու մոմենտը կտրվում ե և համարվում ե վարժության կատարման վերջը:

Իր բոլոր թիրախները ամենակարճ ժամկետում խփած թիմը համարվում ե հանգիպումը տարած, իսկ ամենամեծ ժամկետում խփածը—տարված:

IV ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Կոմպլեքսային (թիմային—անհատական) թիմի կազմը—3 հոգի (2 բղ. խմբի թիմի կազմից ներկայացուցչի հայտով):

Զենքը—փ/կալիբրի ՏՌԶ—8 կամ ՏՌԶ—9 հրացան:

Նշանոցը—բաց:

Նշանները և հեռափորությունը—(հաշվումը կատարվում ե № 1 կրակի գծից): № 21 (հաստոցային գնդացիր)՝ 200 մետր,

№ 14 (վազեվազ)՝ 3 հատ—200 մետր, տեղավորված են ճակատով, 20—30 մետրի վրա, պատկերում են հակագրոհող խումբը: № 11 (գլխավոր)՝ 50 մետր (խրամատի մոտ) լավ դիմակավորված (յերեսում ե միայն գլխի մի մասը), իրենից պատկերացնում ե դիտողին. № 12—կրծքի, փոքրացրած 5 անգամ, 3 հատ—125 մետր, պատկերացնում են հակառակորդի հրաձիգներին, վորոնք ցրված են ճակատով, 5—10 մետր:

Փամփուշներ—10:

Իրադրությունը՝ 1. Ցեղակետային սահմանը—№ 1 կրակի գծից 20 մետր հեռավորությամբ:

2. № 1 կրակի գիծը—խրամատից 50 մետր հեռավորությամբ:

3. Խրամատը՝ 1,5 մետր լայնությամբ, 20—30 սմ. խորությամբ—գերանից 15 մետր հեռավորության վրա:

4. Գերանը կոր ե, 3 մետր յերկարությամբ, 20 սմ. տրամագծով, 1 մետր բարձրացրած—№ 2 կրակի գծից 10 մետր հեռավորություն վրա.

5. № 2 կրակի գիծը — № 1 կրակի գծից 75
մետր հեռավորության վրա (տես իրադրու-
թյան սխեման):

1. Խփել բոլոր նշանները:
2. Յերկու նոնակ նետել խրամատը:
3. Նոնակը շպրտել վորքան կարելի յե
հեռու:
4. Յելակետային սահմանից մինչև № 2
կրակի գիծը յեղած ամբողջ հեռավորությու-
նը հաղթահարել ամենակարճ ժամկետում:

Կատարված կարգը. — Յելակետային սահ-
մանում հրաձիգն ստանում ե 3 նոնակ՝ բալ-
զանկաներ և փ/կալիբրի 10 փամփուշտներ:
Դատավորի հրամանով թագնված առաջա-
նում № 1 կրակի գիծը և կրակում ե
№ 14, № 11, № 21 յերեացող նշանների վրա,
վորոնք հայտնվում են 2 ըոսկեյով: 5 ան-
գամ փոքրացված № 12 նշանները № 1 կր-
ակի գծից հրաձիգն չեն յերեում: Խըփ-
ված № 21 նշանը թագնվում ե: Նշանը թագ-
նվելուց հետո հրաձիգը լցրած, և փա-
կաղակը փակ հրացանով (վոր ստուգում ե
դատավորը) վաղե-վազք ե կատարում և խրա-
մատից 20 մետր հեռավորության վրա,

վազքի ժամանակ, 2 նոնակ ե նետում խը-
րամատը, հաղթահարում ե խրամատը, անց-
նում ե գերանի վրայով, 3—4 կարճ վա-
զեվազք ե կատարում մինչև № 2 կրակի գիծը,
ուր ծնկաչոք նետում ե նոնակը հեռավո-
րության վրա, պառկում ե և կրակ բաց ա-
նում 5 անգամ փոքրացրած № 12 նշան-
ների վրա, վորոնք գտնվում են № 2 կրակի
գծից 50 մետր հեռավորության վրա:

Գնահատականը — 1. Յուրաքանչյուր
նոնակը խրամատի մեջ ընկնելու համար հը-
րածվին հաշվվում ե յերկու աչք:

2. Յուրաքանչյուր նշանին խփելու հա-
մար, անկախ հեռավորությունից, հրաձիգն
հաշվվում ե մի աչք: Մի թիրախում յեր-
կու խփվացքից ավելի չի հաշվվում:

3. Խրամատի վրայով թռչելը համարվում
ե 2 աչք, խրամատի վրայով չթռչելը — 0
աչք:

4. Գերանի վրայով անցնելը հաշվվում ե 2
աչք, չանցնելը — 0 աչք:

5. Ճիշտ կերպով № 1 կրակի գիծը սո-
վոլու համար հաշվվում ե 1 աչք:

6. Նոնակը 30 մետր նետելու համար

հաշվվում ե 1 աչք, յուրաքանչյուր հետևյալ
5 մետրի համար — մեկական աչք:

Հրածդի տված արդյունքը վորոշվում ե
աչքերի գումարով: Աչքերի հավասարության
դեպքում հաշվի յե առնվում տարածու-
թյունը հաղթահարելու համար հրածդի ծախ-
սած ժամանակը:

Թիմի տված արդյունքները վորոշվում են
թիմի աչքերի գումարով: Թիմերի աչքերի
հավասարության դեպքում հաշվի յե առն-
վում տարածությունը հաղթահարելու հա-
մար թիմի ծախսած ժամանակը:

ԶԵՄՊԻՌՆԱՏ (1-ին յեկ 2-րդ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՎՈԶ ՊԱՐԺԱԴԻՐ ՄԱՍԼ

I ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԶԵՆՔը — Փ/կալիբրի ՏՈԶ-8 կամ ՏՈԶ-9
հրացան:

Նշանոց — ցանկացածը, բացի ոպտիկա-
կանից:

Նշանը — № 7:

Հեռավորությունը — 50 մետր:

Փամփուշներ — 5 փորձնական և 20
հաշվանցման :

Հրածդի գումարը — պառկած (հր-
ացանափոկից ոգտվելը թույլատրվում ե):

Հրածդի գումարը ժամանակը — 10
րոպե փորձնականների և 20 րոպե հաշվանց-
ման համար:

Գնահատականը վորոշվում ե աչքերի
գումարով:

Կատարված կարգը. — դատավորը հրածդին
ցույց ե տալիս նշանն ու կրակելու տեղը.
Դատավորի հրամանով հրածդիգը պատրաստ-
վում ե հրածդության, լցնում ե հրացանը
և կրակ բացում:

II ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԶԵՆՔ — Փ/կալիբրի ՏՈԶ-8 կամ ՏՈԶ-
9 հրացան:

Նշանոց — ցանկացածը, բացի ոպտիկա-
կանից:

Նշանը — № 5:

Հեռավորությունը — 100 մետր:
Փամփուշներ — 5 փորձնական և 10 հաշ-
վանցման:

Հըաձգության դիրքը—պառկած (հըրացանափոկից ոգտվելը թույլատրվում է):

Հըաձգության ժամանակը—10 րոպե փորձնականների և 20 րոպե հաշվանցման համար:

Գնահատականը վորոշվում ե աչքերի գումարով:

Կատարման կարգը—դատավորը ցույց ե տալիս նշանն ու հրաձգության տեղը. դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում ե հրաձգության, լցնում ե հրացանը և կըրակ բացում:

Դպրոցական, շրջանային, մարզային, հանրապետական յեվ համամիութենական նոնաձգային մրցությունների

ԾՐԱԳԻՐԸ

Թիմի կազմը—3 հոգի (ջոկվում են ավագ խմբի թիմի կազմից):

Վարժության նպատակը—Ռւզան հայաց նշանի վրա ձեռքի նոնակների նետելու փորձառություն (հարձակողական):

Նշանը — գետնից 1-2 մետր բարձր դրված՝ 100 սմ. բարձրությամբ, 70 սմ. լայնությամբ 3 պատուհան:

Հեռավորությունը մինչև նշանները—մինչև առաջինը՝ 15 մետր, մինչև 2-րդը՝ 12 մետր, մինչև 3-րդը՝ 10 մետր:

Նոնակների թիվը—3 վարժական (յերկուսը պայտասակում և մեկը ձեռքին):

Ժամանակը—մի րոպե:

Գնահատականը.—մի նոնակ նետել 1-ին պատուհանը—գերազանց (5 բալ), 2 րդ պատուհանը—լավ (4 բալ), 3-րդ պատուհանը—բավարար (3 բալ):

Առաջնության վորոշումը—բալերի թվով: Հավասար բալերի գեպքում՝ սակավագույն ժամանակով:

Կատարման կարգը.—հրաձիգը, կրակի սահմանից 15 մետրի վրա նոնակներն սրտամալով, հրացանով ու նոնակներով սողում ե գեպի կրակի սահմանը և մոտակա պատուհանից 10 մետր հեռավորության վրա նոնակները ծնկաչոք նետում ե բոլոր յերեք նշաններին: Ժամանակը հաշվում ե սողալու սկզբից:

Ծանոթություններ.—1 վարժական



Պահանջման
Բանկ

նոնակի կշիռը պետք և հավասար լինի
մարտականի կշիռն:

2. Նոնաձգության գորոցական մրցու-
թյուններն անց են կացվում առանց սողալու:

Հրանգային մրցությունների անցկացման
ցուցումներ

1. Մըսություններին մասնակցելու հա-
մար թույլատրվում են պատանի փորոշի-
լովյան հրածիգները, փորոշիլովյան հրա-
ծիգները և հրածդային խմբակներում նա-
խալատը աստված, բայց նորմաների հանձ-
նումը չհասցըած դպրոցականները:

2. Նոնաձգային վարժությունը կատա-
րելու համար ջոկվում են հրածիգների
ավագ խմբի կազմից 3 հոգի: Ավագ և
կրտսեր խմբերի մասցած հրածիգները կա-
րող են նոնաձգային մրցություններին մաս-
նակցել կոնկուրսից դուրս:

3. Բոլոր մրցությունների համար վահա-
փուշտը—5,6 միլիմետրանոց, հայրենական
արտադրության:

4. Հրացանի վորեե կոնստրուկտիվ փո-
փոխություններ, բացի կոթը կարճացնելուց,
չեն թույլատրվում:

5. Բոլոր վարժությունները կատարելիս
գնահատումը կատարվում ե—

ա) №№ 5,6,7 և 9-ա թիրախների վրա—
փամփուշտով գաբարիտը խախտելով.

բ) Փիգուրային կտրվածքավոր թիրախի
վրա կրակելու դեպքում խփվածք և համար-
վում Փիգուրայի վրա ծակատի վոչ պակաս,
քան կիսի առկայությունը: Ընդուստյունները
և այրվածքները չեն հաշվվում:

6. Հրածդգության շտկում թույլատրվում
է գորոցական մրցություններում, շըա-
նային ու մարզային մրցությունների առա-
ջին վարժություններում և Համամիութե-
նական մրցությունների չեմպիոնատում:

ՌԱԶՄԱԿԱՆ ՏՈՂՈԴՐԱՖԻԱՅԻ ՑԵՎ ԿԱՊԻ
ԳԾՈՎ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐԸ

1 ին խմբի համար
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ ՑԵՎ ՎԱՅՐՈՒՄ
Ուսումնասիրել հետեւյալ հարցերը.
ա) քարտեզի մասշտաբի ընթերցումը և
ուսուական չափերով արտահայտված մաս-

շտարից մետրական չափերով արտահայտված մասշտաբին անցնել կարողանալը.

Բ) արեի, ժամացույցի, աստղերի և տեղական առարկաների ոգնությամբ աշխարհի յերկրների վորոշումը.

Գ) շարժումը քարտեզով և տրված մարդուտով տեղի ուղյեֆի միաժամանակ կարդալը.

Դ) ուղյեֆի տարբեր ձևերի—բարձրության, խորության, լեռնաշղթայի, լեռնալանջի, թամբարդի, զառիվերի, խորշի և ձորակի—պատկերումը հորիզոնականով.

Ե) քարտեզի վրա կետերի առավել բարձրության և զառիվայրերի թեքության վորոշումը.

Զ) թունավորող նյութերով վարակված վայրի քարտի կազմումը:

Խնդիրը կազմվում է ուսումնասիրված հարցերի ծավալով և մրցողներին հայտնվում է միայն մրցությունների ժամանակ:

ԽՆԴՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խնդրի պայմանը. — Մրցողը պետք է անցնի «Ա» կետից «Բ» կետը (նշված

քարտեզի վրա): Շարժման ուղու վրա կա անտառակական վորենե այլ առարկա՝ $\frac{1}{2}$ կիլոմետրի վրա, «Բ» կետից դեպի արևմուտք: Ունեցած տեղեկությունների համաձայն անտառակի արևմայան ծայրը վարակված է թունավորող նյութով:

Պահանջվում է կատարել.

1. Գրել քարտեզի մասշտաբը ուսումնական չափերով (յեթե քարտեզի վրա ցույց է դրված մետրականով):

2. Տրված մարդուտով „շարժվել“ քարտեզի վրա և նկարագրել ուղյեֆը (վորոշավորական հանձնաժողովը նշանակել է քարտեզի վրա):

3. Վորոշել „Բ“ կետի բարձրությունը „Ա“ կետից, „Ա“ կետինը „Կ“ կետից և այլն (վոր քարտեզի վրա նշանակված են դատավորական հանձնաժողովի կողմից):

4. Վորոշել իվաշեվո գյուղից գետի Ֆյորովկա գյուղը ընկած զառիվայրի թեքությունը:

5. Հասնելով անտառակի ծայրը, կազմել թունավորող նյութով վարակված վայրի քարտը:

Գնահատականը.—«Գերազանց» (5 բալ) —խնդրի արագ և միանգամայն ճիշտ լուծումը.

«Լավ» (4 բալ) —խնդրի արագ և հիմնականում ճիշտ լուծումը.

«Բավարար» (3 բալ) —խնդրի դանդաղ, բայց հիմնականում ճիշտ լուծումը.

«Անբավարար» (0 բալ) —խնդրի սխալ լուծումը:

Կատարման կարգը. —Մըսություններն անց են կացվում դասարանում: Մըսողներն ստանում են տոպոգրաֆիական քարտեզներ, վորոնց վրա նշված են առաջադրությունը, և անհրաժեշտ պարագաներ (քանոններ, կարկին և այլն): Սկսած դատավորը հայտարարում է խնդրի պայմանները: Խնդրի լուծումն սկսվում է բոլոր մասնակիցների կողմից միաժամանակ, դատավորի թույլատրությունից հետո: Խնդրի վերջնական լուծումից հետո մըսությունը վոաքի յեւ կանգնում և հայտնում՝ «վերջացրի»:

2-րդ խմբի համար
1-ին վարժություն

Ազիմուտը, երա վարաւումը յեվ շարժումն ազիմուտով նստամենափրւման յենքակա հարցերը.

- ա) ազիմուտի վորոշումը վայրում.
բ) ազիմուտի վորոշումը քարտեզի վրա.
գ) ազիմուտով բարդ և պարզ շարժումը:

2-րդ վարժություն

Ակնաշափային նկարահանում

Պահանջվում ե իմանալ:

- ա) գծերի չափումը վայրում.
բ) մասշտաբների—քայլերի և ժամանակի կառուցումը.

- գ) վայրում յեղած կետերը պլանշետի վրա անցկացնելու ձեւը.
դ) պլանշետի կողմուրոշումը.
ե) ուղղությունների անցկացումը պլանշետի վրա (ուղիղ և հակադարձ տարագիւտություն):

1-ին վարժության յուրաքանչյուր հարցի շուրջը պետք ե պատրաստված լինեն խըն-

գիրներ, վորոնք հաղորդվում են մըցողներին միայն մըցության ժամանակ:

Հ-րդ վարժության համար դատավորական հանձնաժողովս ընտրում է համապատասխան տեղամաս և սահմանում է ակնաչափային նկարահանումը սկսելու և վերջացնելու ժամերը:

Գնահատումը կ' տարկում է այնպես, ինչպես և 1-ին խմբինը:

ԴՐՈՇԱԿՆԵՐՈՎ ԱԶԴԱՆՇԱՆԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարոցական, ցրջանային, մարզային, հանրապետական յեվ նաև միավորքենական մցությունների 1-ին յեվ 2-րդ խմբերի համար:

Պայմաններ. — Պոստերը տեղափորվում են վոչ պակաս, քան 400 մետր հեռավորությամբ: Դրոշակագրերը պետք ե լինեն 25 խմբից (թառից) վոչ ավելի: Աշխատանքը կատարվում է մի ժամվա ընթացքում: Փոխանակության ընդհանուր ժամանակի մեջ են մտնում կանչելն ու առաջարկու-

թյունը, համաձայնության ստացումը, հաղորդումն ու ընդունումը: Պոստն սպասարկում էն 2 հոգի:

Գնահատականը նաև միավորքենական մլրցությունների համար.

„Գերազանց“ (5 բալ) — մեկ ժամ. 100 խումբ.
„Լավ“ (4 բալ) — " " 90
„Բավարար“ (3 բալ) — " " 70 "

Գնահատականը մարզային մցությունների համար.

„Գերազանց“ (5 բալ) — մեկ ժամ. 90 խումբ.
„Լավ“ (4 բալ) — " " 80
„Բավարար“ (3 բալ) — " " 60 "

Գնահատականը ցրջանային յեվ դպրոցական մցությունների համար.

„Գերազանց“ (5 բալ) — մեկ ժամ. 80 խումբ.
„Լավ“ (4 բալ) — " " 70
„Բավարար“ (3 բալ) — " " 50 "

Մցությունների տեղը — թվերով հատկած: Նյութական մասը — 4 հատ ազգանշանային դրոշակներ, մատիտներ և թուղթ: Կատարման կարգը. — «Պոստերը գրավել»

հրամանով մըցողները աեղ են ընտրում, զիմակավորվում են և «անցսել աշխատանքի» ազդանշանով (ժամանակը նշվում ե ժամացույցով) սկսում են կանչելն ու փախանակման հաղորդումը:

Անհատական արգյունքները վորոշվում են տոպոգրաֆիայի ու կապի գծով ստացված բալերի քանակով: Բալերի հավասարության դեպքում—խնդրի լուծման համար գործադրված ամենաքիչ ժամանակով:

Թիմային արդյունքները վորոշվում են տոպոգրաֆիայի և կապի գծով թիմի ստացած բալերի քանակով: Բալերի հավասարության դեպքում—ամենաքիչ ժամանակով:

ՀՈՔՊ ՄՐՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1-ին խմբի նամար

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ № 1

Հակագաղի հագնումը (թիմային)
թիմի կազմը՝ 4 հոգի:

Մրցությունների տեղը—մեծ դահլիճ, կամ բաց հրապարակ:

Նյութական մասը — մասնակիցների
100%-ային ապահովում հակագաղերով:

Հակագաղի սաղավարտի կամ զիմակի չափը պետք է ընտրված լինի անհատականորեն: Վայրկյանաչափերը — դատավորների թվի համաձայն (կարելի յե ոդտվել վայրկյանամաք ունեցող ժամացույցից):

Յելման դիրքը—թիմը շարք ե կանգնում ստարտում, ունենալով «պատրաստ» վիճակում հակագաղեր, պայուսակը հակագաղով ձախ կողքին՝ փոկն աջ ուսով գցած: Հակագաղի պայուսակի վերին կողմը գոտուն հավասար է: Պայուսակի կափարիչները բաց են: Քողն անց ե կացրած ձախողակով, շրջողոր բռնում ե իրանը և ամուր կապված ե աջ ողակից: Թիմը գլխարկները հագած ե:

Վարժության կատարումը. — հրաման ե տրվում՝ «գագեր» և միաժամանակ բաց ե թողնվում վայրկյանաչափը:

Վարժության իրագործումը կատարվում ե կանգնած, հակագաղից ողտվելու կանոնների համապատասխան:

Վերջնական դիրքը.—հակագաղը մարտական վիճակումն ե, այսինքն սաղավարտը (զիմակը) գտնվում է մրցության մասնակցի գլխին, զլիարկները — դիմակների

Վրայից հագած: Թիմից վերջինը ձեռքերը
ցածրացնելու մոմենտին վայրկյանաչափը
կանգնեցվում է:

Դն ահատականը — „Գերազանց“ — հա-
կագաղը հագած ե մինչեվ 3 վայրկյանում,
„Լավ“ — մինչև 4 վայրկյանում, «բավա-
րար» — մինչև 5 վայրկյանում:

Թիմից յուրաքանչուրի սխալի համար
պակասորդագրվում ե ժամանակը. յեթե
գլխարկը ճիշտ չի հագած, կամ ընկել
ե — 1 վայրկյան, սաղավարտի (դիմակի) ակ-
նոցների վոչ մեծ թեքվածությունը 1-
վայրկյան, սաղավարտի (դիմակի) ակնոցների
մեծ թեքվածությունը մեկ կամ ավելի
մասնակիցների մոտ — „անբավարար“ գնա-
հատական:

Վ.Ա.ՌԺՈՒԹՅՈՒՆ № 2

Հակագագի անհատական հագնում. — Յել-
ման դիրքը, վարժության կատարումը և
վերջնական դիրքը նույնն ե, ինչ վոր թի-
մային վարժությունների գեպքում:

Դն ահատականը. — „Գերազանց“ —
հակագաղը հագած ե 2 վայրկյանում,
„Լավ“ — 3 վայրկյանում „Բավարար“ — 4

վայրկյանում, Սխալի համար կատարվում
ե ժամանակի նույնպիսի պակասորդագրում,
ինչպիսին և թիմային վարժություններում:

Վ.Ա.ՐԺՈՒԹՅՈՒՆ № 3

Հրդեհող ոռմբերի հանգցնումը (թիմա-
յին) թիմի կազմը — 4 հոգի:

Մը բությունների տեղը. — բաց հրա-
պարակ. (կառույցներն ու շենքերը պետք ե
լինեն 100 մետրից վոչ մոտիկ):

Նյութական մասը. — 4 հակագագ, 20
պարկ-յուրաքանչյուրը 2-3 կիլոգրամ հողով,
4 թիթեղյա խուփեր (ծխանի խուփեր, կամ
նրանց չափ), նավթ կամ մազութ, 2 թիակ,
7 գունավոր դրոշակներ (2 կապույտ, 4
կարմիր, 1 սպիտակ): Բացի դրանից, զգու-
շության նպատակով, մոտակայքում դրվում
են 2 հրամարիչ և հողով լի արկդ՝ հըդեհ
ծագելու դեպքի համար:

Մրցությունների տեղի կահավորումը

Հրապարակում կենտրոնից (սպիտակ գլո-
ւակ) գեպի հարավ-և հյուսիս չափում են
30 մետրի հեռավորություն, ուր դրվում

Ե մեկական կապույտ գրոշակ, վորը ցույց
Ե տալիս մրցության մասնակիցների՝ յել-
ման կետը. դրոշակների մոտ դրվում են
հողով լիքը Յ-ական պարկ. այնուհետև կեն-
տրոնից զեպի հյուսիս - արկելք, հարավ - ա-
րեվելք, հարավ - արևմուտք և հյուսիս - ա-
րեմուտք չափվում ե 9 մետր հեռավորու-
թյուն ու դրվում են 1-ական կարմիր գրո-
շակ և հողով լիքը Յ-ական պարկ։ Այդ գրո-
շակները ցույց են տալիս այն տեղերը, վո-
րոնցից մրցողը հանգցնում ե հրդեհի ոջախ-
ները։

Դրանից հետո չափումեն կենտրոնից Յ մե-
տրը հեռավորություն զեպի հյուսիս, արևելք,
հարավ և արևմուտք, ուր գրվում են թի-
թեղյա խուփերը՝ կերպարնի և նավթի խառ-
նուրդ ծծացը խծուծներով, հրդեհի ոջախ-
ներ ստեղծելու համար։ Հանգցնելու հեռա-
վորությունը — 7 մետր։

Յելման դիրքը. — Թիմը բաժանվում ե
յերկու պոստի՝ յերկուական հոգով։

Առաջին պոստը կանգնում ե հյուսիսա-
յին յելման դիրքերում և յերկորդ պոս-
տը — հարավային յելման դիրքերում։ Յու-

րաքանչյուր մրցողի մոտ գրված ե հողով
լիքը Յ-ական պարկ։
Հակագաղերը՝ „ալատրաստ“ վիճակում։

Վարժության կատարումը. — Դա-
տավորի հրամանով՝ „ուշագրություն“, մցող-
ներն ընդունում են „զգաստ“ դրություն՝
դեմքերը դեպի կենտրոն։ Միաժամանակ
վառվում են խուփերի հնոտիները, և այն
բանից հետո, յերբ նրանք բռնկվում են,
դատավորը հրաման է տալիս՝ «հանգցնել
կրակը»։ Մրցողները հակագաղերը փոխա-
դրում են „մարտական վիճակի“ և վազում
են հրդեհի ոջախները հանգցնելու տեղերը
(կարմիր գրոշակների մոտ)։

Մրցողներից յուրաքանչյուրն ունի 5
պարկ, վորոնցով նա կարող է հանգցնել
հրդեհի ոջախներից յուրաքանչյուրը։

Մրցողին չի թույլատրվում անցնել կար-
միք դըոշակից (հրդեհի ոջախն ավելի մոտ)։

Վերջնական դիրքը. — Բոլոր ոջախ-
ները պետք ե հանդցրած լինեն, կրակ-
չափետք ե լինի։ Հրդեհի գերջին ոջախը հանգ-
ցնելու մոմենտին կանգնեցվում ե վայր-
կյանաշափը։ Նշվում է ժամանակը և նշա-

նակվում ե, թե քանի պարկ ե ոգտագործված:

Մըցությունների մասնակիցների կողմից կանոնների խախտման համար թիմը տուգանվում ե ոգտագործված պարկերի հետեւյալ պակասագործումով.

ա) մըցողներից մեկի կողմից կարմիր դրոշակից դեպի ոջախն անցնելու համար—2 պարկ.

բ) մըցողներից մեկի կողմից զլխարկը կորցնելու համար—1 պարկ.

գ) մըցողներից մեկի կողմից հակագաղը հանելու համար—“անբավարար”:

Գիտականական. — „Դերազանց“—բոլոր ոջախները հանցնելը՝ ոգտագործելով վոչ ավել, քան 8 պարկ. „Լավ“—նույնը, բայց վոչ ավել քան 10 պարկ. „Բավարար“—նույնը՝ 10.ից մինչև 16 պարկի ոգտագործման դեպքում:

16 պարկից ավելի ոգտագործելու դեպքում գնահատականն անբավարար“ եւ:

Հրդեհի ոջախները հանցնելու արագությունը հաշվի յեւ առնվում թիմերի միջի տեղերը վարոշելիս, յեթե նրանք ոգտագոր-

ծել են հավասար թվով պարկեր: Վորքան ավելի քիչ ժամանակ ծախսվի, այնքան ավելի լավ տեղ ե հատկացվում թիմին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Հրդեհի ոջախների հանցնումը կատալովում է միաժամանակ ամբողջ թիմի կողմից:

2. „Հրդեհիչ ոռումբերի հանցնելը“ վարժության անցկացման որվա և տեղի մասն անհրաժեշտ է նախորդը նախազգուշացնել մոտակա հրշել խմբին:

Դպրոցական և շրջանային մըցություններում հրդեհիչ ոռումբերը հանցնելու հեռավորությունը հինգ մետր եւ:

Վ.Ս.ՐԺՈՒԹՅՈՒՆ Հ 4

Հրդեհիչ ոռումբերը հանցնելն անհատականութեն ե

Կատարվում ե միայն հանրապետական և համամիութենական մըցություններում: Մըցությունների տեղը և նյութական մասը—թիմային մըցություններին համանման:

Հրապարակի կահավորումը: Հրապարակում չափվում են յերեք գիծ:

1. Ցելման դիրքերինը, վոր նշանակված են կապույտ դրոշակներով:

2. „Հրդեհի ոջախները“ հանգցնելու դիրքը, վոր նշանակված ե կարմիր դրոշակներով և կավճե գծով։

3. „Հրդեհի ոջախներինը“, վոր նշանակված են սպիտակ դրոշակներով։

„Հրդեհի ոջախների“ գծի հետափորությունը հրդեհը հանգցնելու դիրքից 7 մետր ե, իսկ յելակետային դիրքից՝ 25 մետր։

Յելման դիրքերում, կապույտ դրոշակների մոտ, դրվում են հողով լիքը 2-ական պարկ։ „Հրդեհի ոջախները“ հանգցնելու գծի վրա (կարմիր դրոշակների մոտ) դրվում են հողով լիքը 3-ական պարկ ևս։

Յելման դիրքը. — Հերթական հերթակալությունը՝ 4 հողուց, շարք ե կանգնում յելման դիրքերում, կապույտ դրոշակների մոտ՝ յերեսը դեպի հրդեհի ոջախները։

Յուրաքանչյուր մասնակցի մոտ գետնին դրված են հողով լիքը 2-ական պարկ։ Հակագաղերը „պատրաստ“ վիճակում են։

Վարժության կարգումը. — Դատավորի հրամանով՝ „ուշադրություն“, մասնակիցներն ընդունում են „զգաստ“ հրամանին

համապատասխանող դիրք։ Միաժամանակ այրում են խուփերի հնոտիները և այն բանից հետո, յերբ նրանք բոցավառվում են, դատավորը հերթով յուրաքանչյուր հերթափոխությանը հրաման է տալիս՝ «հանգնել կրակը»։

Վարժության կատարումը և տուգանքի աչքերի պակասորդագրումը նույնն ե, ինչ և թիմերի մրցությունների ժամանակ։

Գնահատականը. — „Գերազանց“ հրդեհի ոջախի հանգցները վոչ ավելի, քան 2 պարկով, „Լավ“ — 3 պարկով. „Բավարար“ — 4 պարկով։ Չորս պարկից ավելի ոգտագործելու դեպքում կամ յեթե ոջախը չի հանցրված—գնահատականն «անբավարար» ե։

Ժամանակը հաշվի յե առնվում այնպես, ինչպես և թիմերի մրցությունների ժամանակ։

ՀՈՔՊ-ի 2-րդ խմբի Արցուքյունների ծրագիրը
1-ին Վ.Ս.ՌԺՈՒԹՅՈՒՆ

Թունավորող նյութերի վթնոլորտում հակա-
գագի փոխումը

Թիմը բաղկացած է 4 հոգուց։
Մրցությունների տեղը. — 1 խոր.
սանտիմետրին 0,1—0,2 խոր. սմ. կոնցենտ-
րատցիայի խորոպիկորինի գոլորշիներով լրց-
րած գազային կամերա։

Նյութական մասը. — Թունավորող
նյութերի մինոլորտում աշխատելու համար
ալիտանի 8 հակագագ՝ մասնակիցների գլխի
չափերին հարմարեցրած դիմակներով։

Յելման դիրքը. — Մրցողները շարք
են կանգնում, ունենալով “պատրաստ”
վիճակում հակագագեր։ Յուրաքանչյուր մըր-
ցողի մոտ 2-ական հակագագ։ Հիմնականի
պայուսակը — ձախ կողքին, պահեստայինի
պայուսակը — աջ կողքին. պահեստային հա-
կագագի քուղը հիմնական քուղի վերևում
տարած։ Ստարտում գատավորներն ստու-
գում են պայուսակներում հակագագերի
տեղափոխածության ճշտությունը և պա-

յուսակների դիրքի ճշտությունը։ Պահես-
տային սաղավարտի (դիմակի) կղակի մա-
սը չպետք է դուրս-ցցվի հակագագի պա-
յուսակի առջենի պատճի վերին ծայրից։ Զի-
թուլատովում պատել-հանել սաղավարտի
հաստացրած ծայրը, Պահեստային հակագա-
գի պայուսակը պետք է կախված լինի խստ
կողքին. Հի թուլլատրվում այն առաջ տե-
ղափոխել։ Բոլոր մրցողները պետք է լի-
նեն գլխարկներով։ Պայուսակների փոքր
բաժանմունքներում հակագագի մասը վե-
րին դիրքում պահելու համար ոտար առար-
կաներ կամ փոկեր հայտարերելու, նույն-
պես և պահեստային հակագագի առջենի ու
ձախ կողքի պատերը միացնող կարի քանդ-
ված լինելը հայտարերելու դեպքում (թե-
կուզ մի մրցողի մոտ) — ամբողջ թիմը հե-
ռացվում է ստարտից և տվյալ տեսակի
մրցությունից նրան գրվում է պարտություն
(«անբավարար»)։

Հակագագի տեղափորկածությունն ստու-
գելուց հետո դատավորը հրաման է տալիս՝
“գագեր”։ Այդ հրամանով մրցողները հագ-
նում են հիմնական հակագագերը և դատա-

վորն ստուգում ե հագնելու ճշտությունը,
թույլ տալով ուղղել սաղավարտի (դիմակի),
բողի և այլնի դիրքը:

Այսուենետե մրցողներին կամերան տա-
նելով, դատավորը հրաման ե տալիս՝
„պաշտպանվել“ և այսուենետե (1.2 վայր-
կյանից հետո) „փոխել“: «Պատրաստվել
և փոխել» հրամանների արանքում մրցող-
ներն իրավունք չունեն պահեստային հա-
կագաղի յերեսի մասի դիրքն ուղղելու:
Այդ կանոնը խախտելու յուրաքանչյուր
փորձի համար պակասորդագրվում ե 3
վայրկյան:

Վայրկյանաշախափը բաց ե թողնվում «փո-
խել» հրամանի հետ միաժամանակ: Այդ
հրամանով բոլոր մրցողներն անցնում են
հակագաղերը փոխելուն:

Վարժության կատարումը. — Պահեստա-
յին հակագաղի սաղավարտը հագնելուց հետո
պարտադիր ե արտաշնչումը՝ աջ ձեռքի մա-
տերով հպելով միացնող փողը (պատրուբկա-
յի մոտ): Միացնող փողը հպելու համար պա-
տըրուբկայի շրջումն արգելվում ե:

Մասնաւություն. — Տվյալ յեղանակը, մի-
տեսակության հասնելու նպատակով, կիրաւվում
է նաև դիմակազը հակագաղից ոգովելիս:

Հակագաղը փոխարինելով և միացնող
փողի հպումով արտաշնչում կատարելով,
մրցողներն իջեցնում են ձեռքերը. վայրկ-
յանաշախափը կանգնեցվում ե վերջին իջեց-
վող ձեռքի հետ միասին այն մոմենտին,
յերբ մրցողի աջ ձեռքը թուլացնում ե հըպ-
ված միացնող փողը:

Վերջնական դիրքը. — Պահեստային
հակագաղը հագցված ե մրցողին, հիմնական
հակագաղի միացնող փողը սաղավարտի
(դիմակի) հետ միասին ազատ իջեցված ե
ներքեւ:

Մրցողները կանգնած են „զգաստ“ դիր-
քում. արգելվում ե արտաշնչումից հետո
ուղղել սաղավարտները (դիմակները) և
զլիսարկները: Դատավորը նշանակում ե
թույլ տված սիալները:

Կամերայից գուրս գալուց հետո, դատա-
վորի հրամանով՝ „իմ հետեից, քայլով մարշ,“
դատավորը հրաման ե տալիս հանել հակա-
գաղերը և ստուգում ե մրցողի աչքերի
գրգռվածության ու հազոցի առկայությունը:

Յուրաքանչյուր մրցողի սիալների հա-
մար պակասորդագրվում ե ժամանակը:

- 1) գլխարկն ընկնելու կամ կամերայում
հագած չինելու համար—1 վայրկյան.
 2) սաղավարտի (դիմակի) վոչ-մեծ թեք-
վածություն 1 վայրկյան.
 3) մեծ թեքվածություն . . 2 վայրկյան.
 4) աչքերի վոչ-մեծ գրգովածություն...
2 վայրկ.
 5) աչքերի մեծ գրգովածություն կամ
հազ... 3 վայրկ.
 6) դատավորի՝ „իմ յետելից, կամերայից
դուրս քայլով մարշ“ հրամանից առաջ կա-
մերայից դուրս գալը 3 վայրկյան:
 Դումարված գնհատականը.—„Գե-
րազանց“—յեթե հակագաղի փոխումը կա-
տարված ե 6 վայրկյանում. „Լավ“-8 վայր-
կյանում. „Բավարար“-10 վայրկյանում:
 Վարժությունն անց ե կացվում միայն հա-
նրապետական և համամիութենական մրցու-
թյուններին. դպրոցական, շրջանային ու
մարզային մրցություններում զրա փոխարեն
անց են կացվում 5—7 դասարանների
դպրոցականների ծրագրով. „հակագաղի հա-
գնումը“ թիմային վարժություններ:

2-ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
 Հակագաղի փոխումը բունավոր նյութերի
մթնոլորտում (անհատական)

Յելման դիրքը.—Վարժության կա-
տարումը և վերջնական դիրքը նույնն է, ինչ
և թիմային մրցություններում:
 Գնահատականը.—„գերազանց“, յեթե
հակագաղի փոխված ե 5 վայրկյանում.
 „Լավ“—6 վայրկյանում, „Բավարար“—8
վայրկյանում:

Սխալների համար կատարվում ե ժա-
մանակի նույնպիսի պակասորդագրում,
ինչպես և թիմերի մրցություններում:
 Աչքերի մեծ գրգումը կայմ հազը, ինչ-
պես և դատավորի հրամանից առաջ կա-
մերայից դուրս գալը պատճառ կդառնա
„անբավարար“ գնահատականի:

Վարժությունն անց ե կացվում միայն
հանրապետական ու համամիութենական
մրցություններում:

Յ-ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

“Ինքազացիա ԲԴՊ-1 ձեռքի գործիքներով”
(թիմային)

Թիմի կազմը—2 հոգի:

Մը ցությունների տեղը — հրապարակ պատի կամ ցանկապատի մոտ:

Նյութական մասը. — մի գործիք՝ ԲԴՊ-1, դեգազացիա կատարող նյութեր, աղովով ու լեղակով լի պարկեր՝ 100-ական զբան քաշով, 10 լիտրաչափ 2 դույլ և ջրով լի տակառ:

Յելման դիրքը. — Խումբը շարված է թունավոր նյութերով „վարակված“ վայրից 25 մետր հեռավորության վրա: Պաշտպանական հագուստն ու հակագաղերը մարտական զրության մեջ են: Նյութական մասը գտնվում է խմբից դեպի ձախ՝ 3 մետրի վրա:

Վարժության կատարումը. — Դատավորի հրամանով՝ „անցնել դեգազացիայի“, բաց եթողնում վայրկյանաչափը Խումբն անցնում է գործիքի լցմանը:

Առաջին համարը բաց ե անում ԲԴՊ-

1-ի խումբը, իսկ յերկրորդ համարը դատավորի հանձնարարությամբ պատրաստում ե լուծույթը (մի տոկոսանոց, կիսատոկոսանոց և հինգ տոկոսանոց) և լցնում ե գործիքը:

Այնուհետև առաջին համարը փակում ե գործիքի խումբը, յերկրորդ համարն ողնում ե առաջինին՝ գործիքն ուսերի վրա վերցնելու, վորից հետո առաջինն ուղենորդում ե դեգազացիայի տեղը. յերկրորդը պատրաստում ե լրացուցիչ լուծույթ և բերում ե այն դեգազացիայի տեղը:

Դեգազացիայի տեղամասը — պատ, վորունի 24 քառ. մետր մակերես՝ 2 մետր բարձրությամբ:

Առաջին համարը, մոտենալով դեգազացիայի տեղամասին, նախապատրաստում ե գործիքն աշխատանքի (կոթով կատարում ե 5—6 ճոճում), այնուհետև բացում ե ծորակը և կատարում ուղղահայաց մակերեսի դեգազացիան (վերից ներքե), լծակները ճոճելով մի բոպեյում 16—20 անգամ: Փոշեցանը պետք է գտնվի պատից 20 սմ: Հեռավորության վրա: Այն բանից հե-

տո, յերբ ամբողջ լուծույթն ոգտագործվում է, առաջին համարը բարձրացնում է ձեռքը:

Յերկրորդ համարը մոտենում է և ոգտում գործիքը հանելու և կատարում է գործիքի վերալցում:

Վերջնական դիրքը.—Յերկրորդ լրջման լուծույթն ոգտագործելուց հետո առաջին համարը վերադառնում է յերման դիրքի տեղը, հանում է գործիքը և զեկուցում է դեղազացիան վերջացնելու մասին «դեղազացիան վերջացը»:

Զեկուցումն ավարտելուց հետո վայրկյանաշափը կանգնեցվում է:

Սխալների համար պակասորդագրվում է.

1. Տոկոսային հարաբերությամբ լուծույթ կաղմել չկարողանալու համար—30 վայրկյան.

2. Գործիքը ցանցի միջով չցնելու և վըրան լուծույթ թափելու համար—10 վայրկյան.

3. Գործիքի լցնումը՝ առանց ուսից հանելու—10 վայրկյան.

4. Նորմալ հեռավորությունից 10 սմ. հե-

ռանալու կամ մոտենալու համար—10 վայրկյան.

5. Զըհանը կաղմատել չկարողանալու, ցանցի և շաղացըի աղտոտվելու պատճառները վերացնել չկարողանալու համար—30 վայրկյան.

6. Դեղազացիայի ժամանակ իրեն լուծույթով թրջելու համար—30 վայրկյան.

7. Դեղազացիան ներքեցից կատարելու համար—10 վայրկյան.

Գնահատականը.—առաջնությունը տրվում է վարժությունն ամենակարճ ժամկետում կատարած խմբին:

Գերազանց—յեթե դեղազացիան կատարված է 25 րոպեյում, „լավ“—27 րոպեյում, „բավարար“—30 րոպեյում:

Վարժությունն անց է կացվում միայն հանրապետական ու միութենական մրցություններում: Շրջանային և մարզային մրցություններում գրա փոխարեն անց է կացվում «հրդեհող ուռմբերի հանգցնելը» վարժությունը (թիմային)՝ 5—7 դասարանների դպրոցականների ծրագրով:

4 րդ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՎԴՊ-1 դեգազացիոն գործիքով դեգազացիա կատարելը (թիմային)
(Միայն համամիութենական մրցություն.
ների համար):

Թիմի կազմը—3 հոգի, վորը կազմում ե
դաշտացիոն խումբ:

Մրցությունների տեղը — հարթ
մակերեսով բաց հրապարակ:

Նյութական մասը.—Պաշտպանվելու
հագուստի 3 կոմպլեկտ, խորային կրով լի
50 կիլոգրամանոց տակառ (իմիտացվում ե
սղոցունքի հետ խառնած ավագով^{—1/3} ավազ
և ^{2/3} սղոցունք) 1 գործիք՝ ՎԴՊ-1, 4 դե-
ղին և 2 կարմիր դրոշակներ, 2 վայրկյանա-
չափ, 2 թիակ:

Ցելման կետը.—Դեգազացիոն խումբը
կանգնում ե մի շարք՝ կարմիր դրոշակնե-
րի ու ՎԴՊ-1 գործիքի միջև:

Պաշտպանվելու հագուստը մարտական
դրության մեջ ե՝ ՎԴՊ-1 գործիքը գտնվում
ե ձախ թևում, նշանակված 2 կարմիր դրո-
շակներով:

Հողով լիքը տակառը տեղավորված ե ՎԴՊ
—1 գործիքից գեպի ձախ, 5 մետրի վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործիքը կարող է ունենալ
կատարելագործված անցում զատարկ շարժընթացից
աշխատանքի շարժընթացին և ընդահառակը:

Վարժությունների կատարումը.—
դատավորի „սկսել դեգազացիան“ հրամա-
նով վայրկյանաչափը գործի յե գցվում:
Խումբն սկսում է գործիքը լցնել, մոտե-
ցնելով այն ավագով լիքը տակառին: Այնու-
հետև առաջին համարը բացում և հետ ե
քաշում գործիքի վերին խուփը, իսկ յեր-
կրորդ ու յերրորդ համարները տակառից
„քրորային կրով“ լցնում են գործիքը:

Գործիքը լցնելով, պետք է նրա վերին
խուփը ծածկել և մղակը փակել, իջեցնել
վահանիկները, բարձրացնել ու ամրացնել
դրոցը: Դրանից հետո առաջին համարը
տանում ե գործիքը, հրելով այն իր առջեկից,
մինչև վարակված տեղամասը, վոր նշված
ե լինում 4 դեղին դրոշակներով:

Տեղամասը պետք է ունենա 70 մետր
յերկարությամբ, 1,7 մետր լայնությամբ
հարթակ:

Գործիքը լցնելու տեղից մինչև թունավորող նյութերով վարակված հողամասը հեռավորությունը պետք է լինի 25 մետր:

Գործիքը մոտեցնելով վարակված տեղամասին, առաջին համարը գործիքը պատրաստում ե աշխատանքի համար և այնուհետև սկսում ե դեղազային։ Դեղազացիան ավարտելով, գործիքի հետ վերադառնում ե լցնելու տեղը։

Խումբը մի շարքով կանգնում է գործիքի գեպի աջ՝ Այն մոմենտին, յերբ խումբը շարք ե կանգնում (վերջնական դիրք), վայրկյանաչափը կանգնեցնում են։

Գնահատականը.— „Վերադանց“, յեթե զեղազացիան կատարված ե 3 ըոպեյում, „լավ“—4 ըոպեյում, „բավարար“—5 ըոպեյում։

Սխալների համար պակասորդագրվում ե՝
1) մի քառ. մետրի հավասար յուրաքանչյուր խարակի համար—30 վայրկյան։

2) „Թունավորված տեղամասին“ մոտենալուց առաջ ավագը չթունավորված տեղամասում շաղ տալու համար—30 վայրկյան։

3) վահանիկները չցածրացնելու համար — 30 վայրկյան։

4) թիմից վորեե մեկի կողմից հակազազ հանելու համար—անբավարար։
Առաջնությունը տրվում է լավագույն ժամանակ ցույց տված խմբին։

ՍԱՆԻՑԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Կրտսեր խմբերի համար (5, 6 յեկ 7 դասարաններ)

1-ին ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

«Տուժվածին» անհատական կարգով հակագագ հազցենելը

Մըցության տեղը — մեծ շենք կամ բաց հրապարակ՝ 30 մետրից վոչ փոքր։

Նյութական մասը—8 հակագագ (յուրաքանչյուրին 2-ական հակագագ. մեկն իր համար, մյուսը „տուժվածի“): Հագուստը լստ կամքի։

Տեղաբառում 4 մրցող, յուրաքանչյուրը 2 հակագագով. մեկն իր համար (ձախ կողքին), մյուսը „տուժվածի“

համար (աջ կողքին). յերկու հակագաղերն ել „պատրաստ“ վիճակում։ Չորս „տուժված“ պառկած են մեջքի վրա, ստարտից 5 մետր հեռավորութրան վրա։

Վարժության կատարումը — „Գաղեր“ հրամանով մրցողները հագնում են անձնական հակագաղերը։ „Ողնություն“ հրամանով մրցողը վազում է „տուժվածի“ մոտ, չորում նրա գլխավերեր, գլուխը դնում է իր ծնկների վրա։ Պայուսակից հանում ե պահեստի հակագաղը ֆիլտրի տուփի հետ միասին, սաղավարտը (դիմակը) հագնում է „տուժվածին“ և հակագաղի տուփը տեղափորում ե „տուժվածի“ վոտքերի արանքում, հետեւով, փորպեսզի ծալքավոր փողակը ձգված լինի և ծռումներ չունենա։

Ծանոթաբանություն. — Դատավորը վայրկյանաչափը գործի յե դնում „ողնություն“ հրամանից հետո։

Վերջնական դիրքը. — Յուրաքանչյուր մրցող, հակագաղը „տուժվածին“ հագնելուց հետո, վոտքի յե կանգում և ձեռքը բարձրացնում։ Այդ մումենտին վայրկյանաչափը կանգնեցվում է։

Գնահատականը. — „գերազանց,“ յեթե վարժությունը կատարվում է 10 վայրկյանում, „լավ“ — 15 — վայրկյանում, „բավարար“ — 20 վայրկյանում, „անբավարար“ — 20 վայրկյանից ավելի։

Ծանոթաբանչյուր. — Ժամանակը հաշվում ե յուրաքանչյուր մրցողի համար առանձին Բավարար քանակությամբ վարկյանաչափերի բացակայության դեպքում մրցությունը կարելի յե անցկացնել մեկ կամ յերկու մրցողի հետ։

Սխալների համար պակասորդագութը կում ե՝

1) „Տուժվածին“ հագցրած հակագաղի դիմակի վոչ մեծ թեքվածության համար — 5 վայրկյան։

2) Ծալքավոր փողակը ձգված լինելու կամ ծալքած լինելու համար — 5 վայրկյան։

3) Դիմակը հագցնելուց հետո „տուժվածի“ գլուխն անզգուշությամբ իջեցնելու համար — 10 վայրկյան։

4) Հակագաղը չհագցնելու կամ դիմակի մեծ թեքության դեպքում — „անբավարար“։

Ծանոթաբանչյուր. — „Տուժվածին“ հակագաղ հագցնելը կատարվում է առանց „տուժվածի“ ողնության։

Հ-րդ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Վիրավորվածներին առաջին ոգնություն
ցույց տալը յեվ երանց ձեռքերի
վրա տեղափոխելը

(Կոլեկտիվ, ողակի կազմում—4 հոգի)

Մը ցության տեղը — մեծ շենք կամ
բաց հրապարակ՝ 35 մետրից վոչ պակաս
յերկարությամբ:

Ն յութական մասը — բոլոր մրցողների
մոտ կան անձնական հակագագեր և, բացի
դրանից, յերկրորդ ու չորրորդ համարների
մոտ՝ պահեստի մեկական հակագագ, իսկ
առաջին համարի մոտ — սանիտարական պա-
յուսակ, թանաքի մատիտ և թուղթ:

Յելման դիրքը — ստարտում մրցող ո-
ղակը շարք ե կանգնած 2-ական հոգով:
Յերկու „տուժված“ նստած են ստարտից
5 մետրի վրա՝ միմյանցից 2 մետր հեռա-
փորությամբ:

„Տուժվածներից“ մեկը վիրավորված ե
ձախ սրունքի կակուղ հյուսվածքից միջին
յերրորդում՝ ուժեղ արյունահոսությամբ և
թեթև վիրավորված աջ ծնկից. մյուսը վիրա-

վորված ե աջ ձեռքի թաթից ափի մակե-
րեսի վրա՝ ուժեղ արյունահոսությամբ և
թեթև վիրավորված ե աջ ծունկը:

Վարժության կատարումը — „ող-
նություն“ հրամանով գործի յեր դրվում
վայրկյանաշափը և ողակը վագում ե տուժ-
վածների՝ մոտ (առաջին և յերկրորդ ողա-
կայինները — առաջին „տուժվածի“ մոտ,
յերրորդն ու չորրորդը — յերկրորդի) նրանց
ոգնություն ցույց տալու համար: Առաջին
համարը, վազելով „տուժվածի“ մոտ, քուղ
ե դնում նրա ձախ ազդրի վրա, քուղի տա-
կից նախորոք դնելով բինտե 3-4 շերտից
բաղկացած տակադիր: Միաժամանակ յերկ-
րորդ համարը բաց ե անում մանրեյաջընջ-
ված բինտը (ստերինի բինտ), վիրակապ
դնում աջ ծնկանը: Քուղը դնելով, առաջին
համարը մանրեյաջնջված վիրակապ ե դնում
ձախ սրունքին:

Վերջացնելով „տուժվածին“ ոգնություն
ցույց տալը, ողակայինները յերկուսն ել
ոգնում են նրան զգուշությամբ բարձրա-
նալու, „բարդ փական“ են անում (առաջին
համարի „բարդ փական“ հրամանով) և

„տուժվածին“ տեղափոխում են ձեռքերի վրա ֆինիշի մոտ, 25 մետր հեռավորությամբ։

Յերրորդ ողակայինը „ոգնություն“ հրամանով վազելով յերկրորդ տուժվածի “մոտ, սրա աջ ուսին զլսաշորից ոլորք և դնում, միաժամանակ չորրորդ համարը բաց և անում մանրեածնչված բինտը և փաթաթում „տուժվածի“ աջ ծնկան վերքը։ Ոլորք դնելով, յերկրորդ ողակայինը փաթաթում և „տուժվածի“ աջ թաթի վերքը։

Վերջացնելով „տուժվածին“ ոգնություն ցույց տալը, յերկու ողակայիններն ել, յերրորդ համարի՝ „հասարակ փական“ հրամանով, ոգնում են նրան զգուշությամբ բարձրանալու, „հասարակ փական“ են անում և „տուժվածին“ ձեռքերի վրա տեղափոխում են ֆինիշի մոտ—25 մետր հեռավորությամբ։

Նանորություններ; 1. Վերքը փաթաթելու ժամանակ չի պահանջվում ծախսել ամբողջ բինտը։ Անհրաժեշտ և միտյն միանդամայն հուսալի վիրակապ դնել։ Գլսաշորից ոլորք դնելուց առաջ անհրաժեշտ և տակառիր դնել՝ մարլայի 3-4 շերտից։

2. Քուղի (և ոլորքի) տակ պետք ե գրություն գրվի՝ ցույց տալով քուղը (ոլորքը) դնելու ժամանակը։

3. Յերրորդ և չորրորդ համարներն ոգնում են առաջին ողակայինի սանպայուսակի վիրակապային նյութերից։

Վերջնական դիրքը — գալով ֆինիշի մոտ, ողակայինները զգուշությամբ „տուժվածին“ նստեցնում են նստարանին և բարձրացնում են աջ ձեռքերը։ Այդ մոմենտին վայրկյանաչափը կանգնեցվում եւ ժամանակը նշանակվում է յուրաքանչյուր մրցող զույգի համար։

Նանորությունների մասին պատճենը լինի նախորոք։

Գնահատականը — „գերազանց“, յեթե վարժությունը կատարված է 1,5 ըովեյում, „լավ“ — 2 ըովեյում, „բավարար“ — 2,5 ըովեյում, «անբավարար» — 2,5 ըովեյից ավելի։

Սխալների համար պակասորդագրվում են։

1) Բինտի ծայրը չամրացնելու համար — 10 վայրկյան։

2) քուղը և ոլորքը թույլ ամրացնելու համար (շոշափվում է զարկերակը) — 40 վայրկյան.

3) բինտն ընկնելու համար — 20 վայրկյան.

4) փաթաթանը թույլ կամ չափազանց ուժեղ կապելու համար — 30 վայրկյան:

3-րդ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Փակ կոռվածքի դեպքում առաջին ոգնություն ցույց տալը յեվ „տուժվածին“ պատգարակի վրա դնելը (կոլեկտիվ):¹⁾

Մըսության տեղը — բաց հրապարակ կամ շենք՝ 60 մետրից վոչ պակաս յերկարությամբ:

Նյութական մասը — բոլոր մրցողների մոտ կան անձնական հակագաղեր և, բացի դրանից, առաջին համարի մոտ սանվայուսակ, յերկրորդ ու չորրորդ համարների մոտ — պահեստի մեկական հակագաղ և յերրորդի մոտ — պատգարակը:

Հագուստը — ըստ կամքի:

Յելման դիրքը — ողակը ստարտում է, շարք կանգնած 2-ական հոգով՝ պատգարա-

¹⁾ „Տուժվածի“ քաշը (հագուստը հաշված) չպետք է 35-40 կիլոգրամից ավել լինի:

կը վոտի մոտ և հակագաղերը „պատրաստ“ վիճակում: „Տուժվածը“ մեջքի վրա պառկած է անկայուն թունավորող նյութերի ոջախում՝ ստարտից 5 մետր հեռավորության վրա: Նա ունի ձախ սրունքի փակ կոտրվածք:

„Գաղեր“ հրամանով ողակը հակագաղերը փոխադրում է „մարտական“ դրության և պատգարակը տանում յելակետը (պատգարակը տանում են յերրորդ և չորրորդ համարները): „Ոգնություն“ հրամանով ողակը վաղեվազ գնում է ոջախը — „տուժվածի“ մոտ:

Նրա մոտ վաղելով, յերկրորդ համարը չոքում է „տուժվածի“ զիսի մոտ, զլուխը դնում է իր ծնկերի վրա, պայուսակից հանում է պահեստի հակագաղը, այն հագնում է „տուժվածին“ և հակագաղի տուփը գնում „տուժվածի“ վոտքերի արանքում, հետեւլով, վոր ծալքավոր փողակը ձգված լինի: Այդ ժամանակ առաջին և չորրորդ համարները լրիվ անշարժ վիրակապ են գնում „տուժվածի“ ձախ սրունքին: Շիները բինտով ամրացվում են, իսկ յերրորդ համարը բաց է անում պատգարակը և դնում

գետնին „տուժվածի“ այն կողքից, վորտեղ
նրա վերքն ե (տվյալ դեպքում — ձախ
կողքից):

Այդ ամբողջ աշխատանքն ողակը կատա-
րում ե առանց հրաման արվելու: Շինային
փաթաթան դնելով, ողակի հրամանատարը
հրաման ե տալիս՝ “հիվանդի մոտ“: Այդ
հրամանով յերկրորդ, յերրորդ և չորրորդ
համարները տեղափորվում են „տուժվածի“
առողջ կողքին, կանգնում են մի ծնկով չո-
քած և „վերցրու“ հրամանով իրենց ձեռքերը
խորը մտցնում են „տուժվածի“ տակ, պա-
տրաստվելով նրան բարձրացնել և պառկե-
ցնել պատգարակի վրա: Այդ ժամանակ ողա-
կի հրամանատարը հակառակ կողմից պատ-
գարակը մոտեցնում ե „տուժվածին“:

Այնուհետև „բարձրացրու“ հրամանով
յերեք մրցողները միաժամանակ բարձրա-
ցնում են „տուժվածին“ և „իջեցրու“ հրա-
մանով զգուշությամբ իջեցնում են նրան
ողակի հրամանատարի մոտեցրած պատգա-
րակի վրա, և ողակի հրամանատարը բարձրա-
ցնում ե ձեռքը: Այդ մոմենտին վայրկյա-
նաշափը կանգնեցնում են:

Գնահատականը — „գերազանց“, յեթե-
վարժությունը կատարված ե 1,5 ըովեյում,
„լավ“ — 2 ըովեյում, „բավարար“ — 2,5 ըո-
վեյում, „անբավարար“ — 2,5 ըովեյից ա-
վելի:

Սխալների համար պակասորդա-
գրվում ե՝

1) պատգարակի փականն ամրացված չե-
նելու համար — 20 վայրկյան.

2) „տուժվածին“ առանց հրամանի պատ-
գարակի վրա դնելու համար — 10 վայրկյան.

3) „տուժվածին“ անփույթ կերպով պատ-
գարակի վրա դնելու համար — 1 ըովե.

4) հակագաղի տուփը վայր ընկնելու հա-
մար — 10 վայրկյան.

5) „տուժվածին“ հագցրած հակագաղի
վոչ մեծ թեքության համար — 5 վայրկյան.

6) շիները թույլ ֆիկսացնելու համար —
1 ըովե.

7) յեթե մրցողներից թեկուց մեկը հա-
կագաղը հանում ե սահմանված ժամանա-
կից առաջ, կամ „տուժվածի“ հակագաղը

հազգրած ե մեծ թեքվածությամբ, ողակն ստանում ե „անըավարար“ գնահատական:

Ծանօթություն. — Մրցությունները վերջանալուց հետո նյութական մասը կարգի յերելում. հակագաղերը, հրահանդի համաձայն, չորացվում են:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ավագ խմբերի համար (8, 9, յևլ 10 դասարաններ)

Եին Վ.Ա.ՐԺՈՒԹՅՈՒՆ

«Տուժվածի» մոտ սողալը յեվ նրան
հակագագ հազցնելը
(անհատական)

Մրցության աեղը — մեծ շենք կամ
բաց հրապարակ՝ 30 մետրից վոչ փոքր:

Նյութական մասը — 8 հակագաղ (յուրաքանչյուր մրցողին յերկուական հակագ՝
մեկն իր համար, մյուսը — „տուժվածի“): Հագուստն — ըստ կամքի:

Ցելման դիրքը — ստարտում 4 մրցող
կա, յուրաքանչյուրը յերկու հակագազով.
մեկն իր համար (ձախ կողքին), մյուսը
„տուժվածի“ համար (աջ կողքին): Ցերկու
հակագաղերն ել „պատրաստ“ վիճակում:
Չորս „տուժվածներ“ պատկած են մեջքի վրա,
ստարտից 5 մետր հեռու:

Վարժության կատարումը — „գագեր“ հրամանով մրցողը հագնում է անձնական հակագաղը: «Ոգնություն» հրամանով նա սողում է „տուժվածի“ մոտ և նրա գլուխը բարձրացնում իր ծնկների վրա: Այնուհետև պայուսակից հանում է պահետի հակագաղը ֆիլտրի տուփի հետ միասին, զիմակը (սաղավարտը) հազցնում „տուժվածին“ և հակագաղի տուփը տեղափորում նրա վոտքերի արանքում:

Ծալքավոր փողակը պետք է ձգված լինի և չպետք է ունենա բեկվածք:

Հակագաղը „տուժվածին“ հազցնելով, մըրցողը սողալով վերապառնում է յելման դիրքը:

Ծանօթություն. — Դատավորը վալրկյանաչափը գործի յե դնում „ոգնություն“ հրամանով:

Վերջնական գիրքը—յուրաքանչյուր
մըցող, կատարելով վարժությունը, բարձ-
րացնում ե ձեռքը։ Այդ մոմենտին կանգ-
նեցնում են վայրկյանաշավիր։

Գնահատականը—„գերազանց“, յեթե
վարժությունը կատարված ե 25 վայրկյա-
նում, „լավ“—30 վայրկյանում, „բավարար“
—35 վայրկյանում, „անբավարար“—35 վայր-
կյանից ավելի։

Սխալների համար առակասորդա-
գրվում ե՝

1) „տուժվածին“ հազցրած հակագաղի
վոչ մեծ թեքվածության համար—5 վայր-
կյան։

2) ծալքափոր փողակը ձգված չլինելու հա-
մար—5 վայրկյան։

3) զիմակը հազցնելուց հետո „տուժվա-
ծի“ զլուխը անզգուշությամբ իջեցնելու
համար—10 վայրկյան։

4) հակագաղը չհազցնելու, դիմակի մեծ
թեքվածության համար—„անբավարար“։

Ծանոթություն. — Հակագաղը „տուժվա-
ծին“ հազցնելը կատարվում ե առանց նրա
ոգնության։

2-րդ վարժութային

Վիրավորներին ¹⁾ առաջին ոգնություն
ցույց տալը յեվ նրանց ձեռքերի վրա և-
դափոխելը

(Կոլեկտիվ, ողակի կազմում—4 հոգի):

Մրցության աեղը — մեծ շենք կամ
բաց հրապարակ՝ 35 մետրից վոչ պակաս
յերկարությամբ։

Նյութական մասը — բոլոր մըցողնե-
րի մոտ անձնական հակագաղեր և, բացի
դրանից, 2-րդ և 4-րդ համարների մոտ պա-
հեստի մեկական հակագաղ, իսկ առաջին
համարի մոտ՝ սանպայուսակ, թանաքի մա-
տիտ և թուղթ։ Հագուստին ըստ կամքի։

Յելման գիրքը — ստարտում մըցող
ողակը շարք ե կանգնած 2-ական հոգով։
Յերկու „տուժված“ նստած են ստարտից
5 մետրի վրա, իրարից 2 մետր հեռու։
„Տուժվածներից“ մեկը վիրավորված ե ձախ
սրունքի փափուկ հյուսվածքից միջին յեր-
բորդում ուժեղ արյունահոսությամբ և

„Տուժվածին“ ¹⁾ քաշը հագուստի հետ միասին 35-40 կի-
լոգրամից ավել չպիտի լինի։

թեթև վիրավորված դագաթոսկըների մասում, մյուսի աջ ձեռքի թաթն եւ վիրավորված ափի մակերեսի վրա՝ ուժեղ արյունահոսությամբ և թեթև վիրավորված եւ դագաթոսկըների մասում։

Վարժության կատարումը — „ոգնություն“ հրամանով վայրկյանաչափը գործի յերգում և ողակը վազում եւ „տուժվածի“ մոտ (առաջին և յերկրորդ ողակայինները — առաջին „տուժվածի“ մոտ, իսկ յերրորդը և չորրորդը — յերկրորդի մոտ)՝ ոգնություն ցույց տալու համար։

Առաջին ողակայինը, „տուժվածի“ մոտ վազելով, քուղ եւ դնում նրա ձախ ազդրին, նախորոք քուղի տակից զնելով բինաի 3—4 շերտից բաղկացած տակաղիբ։ Այնուհետեւ բաց եւ անում անհատական պակետը և փաթաթում „տուժվածի“ ձախ սրունքի վերը։

Միաժամանակ 2-րդ ողակայինը գլուխը փաթաթում եւ յերկգլխանի 10—սանտիմետրանոց բինաով (Գիպալկրատի գլխարկ)։

„Տուժվածին“ ոգնություն ցույց տալը վերջացնելով, յերկու ողակայիններն ել ոգնում են նրան զգուշությամբ բարձրանալու, „հասարակ փական“ են անում (յերրորդ համարի հրամանով՝ „հասարակ փական“) և „տուժվածին“ ձեռքերի վրա տեղափոխում են ֆինիշի մոտ, 25 մետր հեռավորության վրա։

Նում են նրան զգուշությամբ բարձրանալու, „բարդ փական“ են անում (առաջին համարի հրամանով՝ „բարդ փական“) և „տուժվածին“ ձեռքերի վրա տեղափոխում են ֆինիշի մոտ, 25 մետր հեռավորությամբ։

Յերրորդ ողակայինը, „ոգնություն“ հրամանով յերկրորդ «տուժվածի» մոտ վազելով, գլխաշորով նրա աջ ուսին ոլորք եղնում, վորից հետո բաց եւ անում անհատական պակետը և փաթաթում եւ աջ թաթի վերքը։ Այդ նույն ժամանակ չորրորդ համարը յերկգլխանի 10—սանտիմետրանոց բինաով փաթաթում եւ „տուժվածի“ գլուխը (Գիպալկրատի գլխարկ)։

„Տուժվածին“ ոգնություն ցույց տալը վերջացնելով, յերկու ողակայիններն ել ոգնում են նրան զգուշությամբ բարձրանալու, „հասարակ փական“ են անում (յերրորդ համարի հրամանով՝ „հասարակ փական“) և „տուժվածին“ ձեռքերի վրա տեղափոխում են ֆինիշի մոտ, 25 մետր հեռավորության վրա։

Մանօրություններ—1. Վիրակապ զնելու ժամանակ չի պահանջվում ծախսել ամբողջ

բինաը: Միայն անհրաժեշտ և միանդամից հուսալի վիրակապ դնել: Դլխաշորից ոլորք դնելուց առաջ անհրաժեշտ և տակաղիք դնել՝ մասլայի 3—4 շերտից:

2. Քուղի (և ոլորքի) տակ պետք ե գըրություն դրվի՝ ցույց տալով քուղը (ոլորք) դնելու ժամանակը:

3. Յերրորդ և չորրորդ համարներն ոգում վում են առաջին ողակայինի սանպայուսակի վիրակապային նյութերից:

4. Անհատական պակետը վերցվում և քաղաքացիական տեսակի:

Վերջնական դիրքը — ֆինիշի մուտքալով, ողակայինները զգուշությամբ „տուժվածին“ նստեցնում են նստարանին և աջ ձեռքերը բարձրացնում: Այդ մոմենտին կանգնեցվում ե վայրկյանաչափը: Ժամանակը նշանակում ե յուրաքանչյուր մրցող զույգի համար:

Ծանօթություն: — Ֆինիշի համար նըստարանը պետք ե պատրաստված լինի նախորոք: Գնահատականը՝ „գերազանց“, յեթե վարժությունը կատարված ե 2 րոպեյում, „լավ“ — 2 րոպե 30 վայրկյանում, „բավարար“ — 3 րոպեյում, „անբավարար“ — 3 րոպեյից ավելի:

Սխալների համար պակասորդակարգում են:

1) Բինաի ծայրն ամրացրած չլինելու համար — 10 վայրկյան.

2 քուղը և ոլորքը թույլ են ամրացված (շշափկվում ե զարկերակը) — 40 վայրկյան.

3) Բինան ընկնելու համար — 20 վայրկյան.

4) Վիրակապը թույլ ու անփույթ ե դըրված — 30 վայրկյան:

3-ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Փակ կոտրվածքի դեպքում առաջին ոգիությունը ցույց տալի ու «Տուժվածին» բունավորման ոջախից դուրս տանելը (կոլեկտիվ¹⁾)

Մրցության տեղը — բաց հրապարակ՝ կամ 60 մետրից վոչ պակաս յերկարությամբ շենք:

Նյութական մասը — բոլոր մրցողների մոտ կան անձնական հակագաղեր, և բացի դրանից, յերկրորդ ու չորրորդ համարների մոտ՝ պահեստի մեկական հակագաղ, առաջին համարի մոտ սանպայուսակ և յեր-

1) „Տուժվածին“ բաշը (հագուստը հաշված) չպետք ե 35—40 կելոդրամից ավելի էլենի:

բորդի մոտ—պատգարակ։ Հագուստը ըստ
կամքի։

Յելման դիրքը—ողակը ստարտում
շարք ե կանգնած 2-ական հոգով, պատգարա-
կը „վոտքի մոտ“ և հակագաղերը «պա-
տրաստ»։ „Տուժվածը“ մեջքի վրա պառկած
ե անկայուն թունավորող նյութերի ոջա-
խում ստարտից 5 մետր հեռավորության
վրա։ Նրա ձախ սրունքը փակ կոտրվածք ունի։

„Գազեր“ հրամանով ողակը հակագաղերը
փոխադրում ե „մարտական“ վիճակի և
պատգարակը վերցնում ե յելման դիրքի
(պատգարակը տանում են յերրորդ և չորրորդ
համարները)։ „Ոգնություն“ հրամանով
ողակը փազեվագ ուղղվում է դեպի ոջախը—
„տուժվածի“ մոտ։

Վազելով նրա մոտ, յերկրորդ համարը
չոքում ե „տուժվածի“ գլխի մոտ, գլու-
խը դնում ե իր ծնկներին, պայուսակից հա-
նում ե պահեստի հակագաղը, հազցնում ե
„տուժվածին“ և հակագաղի առվար գնում
ե „տուժվածի“ վոտքերի արանքում, հետե-
վելով, վոր ծալքավոր փողակը ձգված լինի։

Այդ ժամանակ առաջին և չորրորդ հա-

մարները „տուժվածի“ ձախ սրունքը փա-
թաթում են լրիվ անշարժ վիրակապով (շի-
ներն ամբացվում են բինտով), իսկ յերրորդ
համարը բաց ե անում պատգարակը և ցած
իջեցնում „տուժվածի“ այն կողմից, վորտեղ
նրա վերքն ե (տվյալ գեպքում—ձախից)։

Այդ ամբողջ աշխատանքն ողակը կատա-
րում ե առանց հրաման տրվելու։ Շինային
վիրակապ դնելով, ողակի հրամանատարը
հրաման է տալիս „հիվանդի մոտ“։ Այդ հը-
րամանով յերկրորդ, յերրորդ և չորրորդ հա-
մարները տեղափորվում են „տուժվածի“
առողջ կտրին, կանգնում են մի ծնկան
վրա և „վերցնել“ հրամանով՝ ձեռքերը խորը
տանում են „տուժվածի“ տակով, պատ-
րաստվելով նրան բարձրացնել ու պառկեց-
նել պատգարակի վրա։ Այդ ժամանակ ողա-
կի հրամանատարը հակառակ կողմից պատ-
գարակը մոտեցնում ե „տուժվածին“։

Այնուհետև „բարձրացրու“ հրամանով
յերեք մրցողները միաժամանակ բարձրաց-
նում են „տուժվածին“, „իջեցրու“ հրա-
մանով նրան զգուշությամբ իջեցնում են
պատգարակի վրա և „պատգարակի մոտ“.

հրամանով բոլոր մրցողները գրավում են իրենց տեղերը պատգարակի մոտ ու բռնում են այն, յերեսները դարձնելով այն կողմը, վոր կողմը դարձված ե ողակի հրամանատարի յերեսը:

Պատգարակը վերցնում են հետևյալ կարգով. ողակի հրամանատարը և յերրորդ համարը—պատգարակի յերկու կողմերից, մեջ տեղին, յերրորդ համարը—բռնում ե պատգարակի զվարակերեսի մասի ընկներից և չորրորդը—„տուժվածի“ վոտքերի մասի ընկներից:

„Բարձրացրու“ հրամանով բոլոր համարները բարձրացնում են պատգարակը և „մարշ“ հրամանով „տուժվածին“ դուրս են տանում ոջախից և քայլով նրան տանում 50 մետր հեռավորությամբ ֆինիշի մոտ՝ քայլերը միասին չգցելով:

Վերջնական գիրքը—գալով ֆինիշի մոտ, ողակը պատգարակը գետին և դնում, ողակի հրամանատարը հանում ե „տուժվածի“ հակագաղը և բոլոր մրցողները հանում են անձնական հակագաղերը:

Վերջին համարը հակագաղը հանելու մա-

մենաթին կանգնեցնում են վայրկյանաչափը: Գնահատականը — „գերազանց“, յեթէ վարժությունը կատարված ե 3 րոպեյում „լազ“—3,5 րոպեյում, „բավարար“—4 րոպեյում, „անբավարար—4 րոպեյից ավելի:

Սխալների համար պակասութափ ե՝

1) պատգարակի փականն ամրացված չկնելու համար—20 վայրկյան.

2) „տուժվածին“ պատգարակի վրա դնելն առանց հրամանի կատարելու համար—10 վայրկյան.

3) „տուժվածին“ անփույթ կերպով պատգարակի վրա դնելու համար—1 րոպե.

4) „տուժվածին“ տեղափոխելու ժամանակ վազելու համար—30 վայրկյան.

5) հակագաղի տուփը վայր ընկնելու համար—10 վայրկյան.

6) „տուժվածին“ հազցրած դիմակի վոչ մեծ թեքվածության համար—5 վայրկյան.


7) պատգարակը տանելիս վոտքերը միաժամանակ գցելու համար—10 վայրկյան.

8) շիները թույլ և անփույժի դնելու
ամաբը — 1 ըսպե.

9) յեթե մըցողներից թեկուզ մեկը սահ-
մանված ժամանակից առաջ հանում և հա-
կագաղը կամ հակագաղը „տուժվածին“
հազցրած և մեծ թեքվածությամբ, ողակը
„անբավարար“ գնահատական և ստանում:

Ծանոթություն.—Մըցությունները վերջա-
սալուց հետո նյութական մասը կարգի յե-
ղցվում: Հակագաղերը հրահանգի համաձայն
չորացվում են:

Ծարքմանեց՝ Դ. ԶԵՎՈՐԳՅԱՆ	
Պատ. Խմբագիր՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ՀԱԿ Նո 186	
Վեճճ. Լ.	
Հանձնված և արտադրության 26/1-40 թ.	
Սարքագրված և տպագրության 25/1-40 թ.	
Տպագր. Թերթերի քանակը 23/4	
Գլավիտի լիազոր № 1931	
Պատվեր № 69, տիրաժ 650	
Աղերնեց, Բազու, Ալի Բայրամովի փողոց	





8430

Арм.
Н-5612

1940-çə ILDƏ
PIONER VƏ MƏKTƏBLILƏRİN
YUMUM İTTİFAQ MYDAFIƏ
JARŞSLARЬ

(ƏSASNAMƏ VƏ PROGRAMMA)

AzLOGI MƏ
Uşaq və Gənclər Ədəbijiyyat Nəşriyyatı
Bakъ — 1940

H APM.

H1-564a